



ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

24 ՀՈՒՆԻՍԻ 2020 թ.
№ 7 (1057)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ • հրատարակման 55-րդ տարի

ԽԱՂԱՏՈՒ ԱՐԴՈՒՄԻ ԱՆՎԱՆ ԸՆԹԱԿԱՆ ԴԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐՁԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԴԱՇՏԱԿԱԹԵՐԹ

ԲԱՐԻ՝ ԵՐԹ, ՍԻՐԵԼԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐ

Ասում են՝ իր վերջն ունի ամեն սկիզբ, ինչպես և ամեն ավարտ մի նոր սկիզբ է խորհրդանշում



Ավարտվեց ևս մեկ ուսումնական տարի՝ 2019-2020-ը: 2020 թվականը փորձությունների շրջապտույտի մեջ առավ ամբողջ աշխարհը, այդ թվում և Հայաստանը. համաշխարհային Կովիդ-19 համավարակը փոխեց մարդկանց կյանքի ընթացքը, ապրելու կերպն ու գործունեության տեսակները: Հանրապետությունում թերևս առաջինը խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանն էր, որ կիրառեց հեռավար ուսուցման մեթոդները: Ուսանողներն ու դասախոսները, համալսարանի ղեկավարությունն ու պրոֆեսորադասախոսական կազմը փոխեցին աշխատանքային ռազմավարությունը՝ ապավինելով մեզանում գոյություն ունեցող հեռավար ուսուցման ամենատարբեր ձևերին:

Դժվար է ասել, թե ժամեր շարունակ համակարգիչների ու հեռախոսների էկրանների առաջ դասախոս-ուսանող ուսումնական գործընթացը որքանով էր արդյունավետ, սակայն ստեղծված իրավիճակում սա էր ելքը, որն էլ բացահայտեց կրթական համակարգի մի շարք թերություններ...

Եթե հաշվի առնենք կրթական ծրագրերի ու դասագրքերի անկատար լինելու հանգամանքը, օտար աղբյուրների անհաջող կապկելու և հայաստանյան իրականությամբ

յանը հրամցնելու որոշ ձեռներեցների ճարպկությունը, տեխնոլոգիաների բացակայությունը հանրապետության հեռավոր ուսումնական հաստատություններում, ինչպես նաև այդ և սոցիալական պայմանների համատեքստում դիմորդների տարեցտարի նվազող թվաքանակի փաստը, ապա առավել ցայտուն կդառնա կրթության ոլորտում անհապաղ կտրուկ փոփոխությունների իրականացման անհրաժեշտությունը:

Ուսումնական տարվա վերջին կիսամյակում հանրապետության ուսումնական հաստատությունները հեռավար ուսուցման հնարավոր ուղիներ ընտրեցին՝ փորձելով անորոշությունն ու համավարակի տագնապը մեղմել սերնդակրթությամբ: Հայաստանի բուժաշխատողներն իրենց ամենօրյա խիզախումով փորձում են համավարակի երախից հնարավորինս շատ մարդկային կյանքեր փրկել՝ վտանգելով սեփական առողջությունն ու կյանքը: Նրանցից հետ չմնացին ուսուցիչներն ու դասախոսները՝ ոչ միայն իրենց գիտելիքները փոխանցելով աշակերտներին և ուսանողներին, այլև իրենց վերապահված առաքելությամբ ու ամենօրյա աշխատանքով հորդորելով հաղթահարել դարի աղետալի փորձությունը...

ԵՎ ահա, մանկավարժական համալսարանից կյանք ճանապարհվեց ուսուցիչների մի նոր սերունդ՝ պատրաստ ուսուցանելու և դաստիարակելու, իրականացնելու նոր ծրագրեր ու մտահղացումներ...

Չէ՞ որ մանկավարժական կրթությունը բոլոր ժամանակների համար է, աշխարհի ամենակարևոր մասնագիտություններից մեկը: Ուսուցիչը բոլոր ժամանակներում եղել է պաշտամունքի առարկա՝ «...թույլ տալով, որ իր գիտելիքներից սերունդները վառեն իրենց ջահերը...»: Ուրեմն մերօրյա վայրիվերումների մեջ չպետք է թույլ տալ, որ դույզմինչ աղավաղվի մեզանում պաշտամունքի հասած ուսուցչի կերպարը, այլև օրեցօր բարձրացնել նրա դերն ու կշիռը հասարակության մեջ:

Շնորհավորում ենք մանկավարժի ուղեգիր ստացած այս տարվա սերնդին ու մաղթում ենք աներեր և հաստատ քայլերով մուտք գործել կրթության ու գիտելիքների տաճար, բարության ու լույսի սերմեր շաղ տալ աշակերտների հոգում, որովհետև նրանք են գալիքի սերմնացանները:

Բարի՛ երթ, սիրելի՛ շրջանավարտներ:



ՀՈՎՀԱՆԱԵԱ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՄԵՐ ՈՒԽՏԸ

Մենք ուխտ ունենք՝

միշտ դեպի լույս,

Ու գնում ենք մեր ճամփով,
Մրրիկներով պատած անհույս,
Սև խավարով, մութ ամպով:

Մենք անցել ենք արյան ծովեր,
Սուր ենք տեսել ու կրակ,
Մեր ճակատը դեմ ենք արել
Մրրիկներին հակառակ:

Ու թեպետև պատառ-պատառ

Մեր դրոշը սրբազան,

Ու մենք չունենք տեղ ու դադար՝
Երկրից երկիր ցիրուցան:

Բայց գնում ենք մենք անվեհեր

Ջարկերի տակ չար բախտի,

Մեր աչքերը միշտ դեպի վեր՝
Դեպի լույսը մեր ուխտի:

ՄԵՏԱՔՍԵ

Գեղատեսիլ Երևանում,
Թևերի մեջ Մասիսների,
Գնում ես դու հավերժություն,
Ուսած փառքը մեր դարերի:

Ցնծա դու մեր համալսարան,
Մայրական գիրկ սերունդների,
Մեզ օժնում ես հայրենական
Ոգու լույսով Աբովյանի...

Մեր ազգային անկախության
Ոգին ես դու ամենագոր,
Մեզ տանում ես մեծ գիտության
Բարձունքները լուսաշնորհ:

Հայոց պայծառ երկնքի տակ
Մեզ կրթում ես սիրով արթուն,
Դու ազգի փառք ու մեծարանք
Մանկավարժի հարազատ տուն:

Ցնծա դու մեր համալսարան,
Մայրական գիրկ սերունդների,
Մեզ օժնում ես հայրենական
Ոգու լույսով Աբովյանի...

Անհատաբանական հոգեբանական հարցերի վերաբերյալ

Համավարակը, որը ճարակել է երկրագունդը, հիշեցնում է հրաշապատում հեքիաթների անտեսանելի հրեշի:

Բոլոր հրաշապատում հեքիաթներն անպայմանորեն ունեն բարու հաղթանակն ու հրեշի պարտությունը: Մենք էլ դուրս կգանք հաղթանակով:

Սակայն առայժմ կյանքը լիովին փոխվել է ամեն մարդու համար՝ արդեն գիտակցող երեխայից մինչև 100-ամյա ծերը: Մարդը սիրում է հետաքրքրություններով լի իրական կյանքը:

Ինչը որ պատմում են, իրական է: Երեք տարեկան և մեկ ամսական աղջիկը, որը ծնողների հետ փակված է տանը, ծանձրացած միօրինակ կյանքից՝ խաղալիք հեռախոսով զանգում է Միկի Մաուսին ու զանգատվում, թե շատ վատ է զգում, չի գնում մանկապարտեզ, չի խաղում ընկերների հետ: Հետո փոխելով ձայնը՝ տալիս է Միկի Մաուսի պատասխանը, որը խորհուրդ է տալիս ինքն իր հետ խաղալ, ուտել և նման բաներ:

Համավարակի օրերին եռանդուն մարդը, որը նախապես է կազմում իր ծրագրերը, դրանք կորցրեց: Մեր ամբիոնը, բանասիրական ֆակուլտետի դեկան Աշոտ Գալստյանի աջակցությամբ, 2020-ի ապրիլի վերջին 2 օրով միացյալ գիտաժողով ուներ Արցախի համալսարանի հետ՝ Գանձասարում: Այն նվիրված էր հայ ժողովրդի մեծագույն զավակներից մեկի՝ Ղևոնդ Ալիշանի ծննդյան 200-ամյա հոբելյանին: «Ղևոնդ Ալիշանը՝ հանրագիտակ» ժողովածուն՝ երկու համալսարանների դասախոսների հոդվածներով, արդեն լույս է տեսել: Սակայն, ավաղ, այնքան ցանկալի գիտաժողովը չկայացավ:

Ընտրված մեր բուհի ղեկավարության հեռատեսության՝ բանասիրական ֆակուլտետում և բուհում ուսումնական գործընթացը չտուժեց: Արդեն չորս տարի է, ինչ բուհում գործում է ուսանողներին և դասախոսներին միմյանց կապող classroom ծրագիրը, որի շնորհիվ մեկ դասաժամ անգամ պարապուրդ չունեցանք: Նույն ձևով անցկացրինք ընթացիկ ու ամփոփիչ քննությունները: Պետական որակավորման քննության հանձնաժողովի նախագահ Վարդան Ղևրիկյանը, հրավիրված ամուսնուհի գրականագետ Սիրանուշ Մարգարյանն ու Պեյր Յավրուկի հիանալի դպրոցի տնօրեն Սուսաննա Դավթյանը հանդգցրեցին, թե որքան հմուտ են տիրապետում մեր ուսանողները հեռավար ու-



սուցմանը: Սակայն, ինչ խոսք, առանձնահատուկ հաճույք է ուսանողին անձամբ և ոչ թե էկրանից հանդիպելը:

Համավարակը փոխեց մեր առօրյան. որոշ մոռացված հնուություններ դարձան կարևոր: Օրինակ, ինքը կտրիր քո մագեր, դարձիր քո մատնահարդարը, հիշիր երիտասարդ տարիներին թխած թխվածքների բաղադրատոմսերն ու ինքը թխիր և գյուտ արածի նման հասկացիր, որ քո պատրաստածն անհամեմատ համեղ է: Ուրախացիր, որ ունես հսկա բաց պատշգամբ ու շաբաթը մեկ անգամ օճառաջրով այն լվանալը համարիր ոչ թե ավելորդ հոգս, այլ՝ ֆիտնես ակունք հաճախել: Քույրս, որն ապրում է Երևանում, և որին երեք ամիս է՝ չեն տեսել, ասում է, թե զգում է որպես երկարաժամկետ թռչչի դուրս եկած տիեզերագնաց: Անկեղծ ասած՝ երբ գնում են բանկոմատից դրամ հանելու, դեղատուն կան խանութ, ինձ թվում է, թե ռմբակոծության տակ եմ, մանավանդ՝ ես դիմակով ու ձեռնոցով եմ, իսկ ոմանք՝ ոչ:

Շատ են կարոտում մեր սքանչելի Երևանի առօրյան, հատկապես, որ չեն կարողանում գնալ ինձ այնքան հարազատ համալսարան, Մատենադարան, ակադեմիա, Գրողների միություն, հանդիպել ինձ սիրելի մարդկանց, անչափ կարոտում են ընկերուհուս՝ Նուրայր Արաբյանի կամ ընկերոջս՝ Նորայր Արաբյանի հետ պարբերաբար Երևանի հիանալի սրճարաններում մեր հանդիպումներն ու մտերմիկ զրույցները: Մեզ մնում է մեծն Հովհաննես Թումանյանի նման երագել:

*Լինե՛ր հեռու մի անկյուն,
Լինե՛ր մանկան արդար քուն,
Երագի մեջ երջանիկ,
Հաշտ ու խաղաղ մարդկություն:*

MODEST ծրագրի շրջանակներում

Երազմուս+ MODEST (Գիտության ոլորտում հետազոտական կրթության արդիականացումը և դասավանդման մեթոդաբանության բարելավումը) ծրագրի գործողությունների իրականացումը շարունակվում է առցանց հարթակներում:

Ապրիլի 7-ին ծրագրի շրջանակներում տեղի ունեցավ «Դոկտորական կրթական ծրագրերի մշակում և կրթական վերջնաորոշումներ» խորագրով առցանց վերապատրաստում:

Վերապատրաստմանը մասնակցում էին ՀՀ-ի մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Լուսինե Դուլդաբաբյանը, Ինֆորմատիկայի և նրա դասավանդման ամբիոնի դոցենտ Սամվել Ասատրյանը և Միջազգային համագործակցության բաժնի ղեկավար Մարիաննա Հարությունյանը: Վերապատրաստման ընթացքում ներկայացվեց Հայաստանում, Բելառուսում, Ռուսաստանում, Լատվիայում, Ֆինլանդիայում և Մեծ Բրիտանիայում իրականացվող դոկտորական կրթական ծրագրերի բովանդակությունը և մշակման գործընթացը, ինչպես նաև փոխանցելի հմտությունների դերը և կիրառումը եվրոպական համալսարանների կրթական ծրագրերում:

Հելսինկիի համալսարանի համակարգման մայիսի 26-27-ը տեղի ունեցան առցանց հանդիպումներ «Դոկտորական վերապատրաստումների կազմակերպումը և ղեկավարումը և հետազոտության մեթոդաբանությունը» թեմայով: Հանդիպումներին մասնակցում էին Կրթության որակի ապահովման և կառավարման բաժնի պետ Մարիան Գևորգյանը, մանկավարժության ամբիոնի դոցենտ Ավետիսյան Մինասյանը, միջազգային համագործակցության բաժնի ղեկավար Մարիաննա Հարությունյանը, ինչպես նաև ՀՀ-ի շուրջ 20 ասպիրանտ և հայցորդ: Հանդիպմանը ներկայացվեցին Հայաստանի, Ռուսաստանի և Բելառուսի դոկտորական կրթությունում առկա խնդիրները, ծրագրի շրջանակներում դոկտորական վերապատրաստման կենտրոնների ստեղծման գործընթացը, հետազոտության առևտրականացումը, Հելսինկիի համալսարանի Հայթիալա միջազգային հետազոտական կենտրոնի աշխատանքը և այլն:

Հիշեցնենք, որ Երազմուս+ MODEST (Գիտության ոլորտում հետազոտական կրթության արդիականացումը և դասավանդման մեթոդաբանության բարելավումը) ծրագիրը մեկնարկել է 2018 թվականին: Ծրագրի նպատակն է Եվրոպական Բարձրագույն Կրթական տարածքի (EHEA) և Եվրոպական Հետազոտական տարածքի (ERA) շրջանակներում գործընկեր երկրների բարձրագույն ուսումնական հաստատությունների համագործակցային կարողությունների ընդլայնումը հետազոտական կրթության ոլորտում:

Քրիստինե ՄԵԼՆՈՅԱՆ

Ըստ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի 2019-2020 ուսումնական տարվա շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման քննությունների արդյունքների՝ առկա ուսուցման համակարգում բակալավրն ավարտել է 1032 շրջանավարտ, որից 424-ը՝ գերազանցության դիպլոմով:

Առկա ուսուցման համակարգում մագիստրատուրան ավարտել է 455 շրջանավարտ, որից 270-ը՝ գերազանցության դիպլոմով, իսկ մագիստրատուրայի հեռակա համակարգում՝ 98 շրջանավարտ, որից 9-ը՝ գերազանցության դիպլոմով:

Առաջիկայում ամփոփիչ ավարտական քննություններ կհանձնեն ուսուցման հեռակա համակարգի բակալավրիատի շրջանավարտները:

ԴԻՊԻ ԵՐԱԶՄԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՅՈՒՄ

Դիմակներ, ձեռնոցներ, պաշտպանիչ միջոցներ, ուսուցիչների հետ հանդիպելու, ավարտական վկայականներ ստանալու անսովոր ու բացառիկ պայմաններ. ՀՀ-ի հեռակետային վարժարանի շրջանավարտների շնորհավորական ուղերձում նշում է տնօրեն Նաիրա Սաֆարյանը:

«Դիմակի տակ քողարկված այդքան թանկ ժպիտներ, իրական ջերմություն փոխանցելու ողջ ծանրությունը թողեցինք դիմակից դուրս՝ թաց աչքերի վրա», - նշեց Նաիրա Սաֆարյանը: Վարժարանի տնօրենը խոստովանում է՝ ավարտական վկայական հանձնելն ու հրաժեշտ տալը, չգրկախառնվելը, ժպիտներ և ջերմություն չփոխանցելը դժվար էր պատկերացնել, սակայն երկուստեք փորձել են հաղթահարել, այդպես էր թելարդում ստեղծված իրավիճակը: Վարժարանի սաների շատերը վստահեցնում են իրենց ուսումը շարունակելու են Մանկավարժական համալսարանում, քանի որ վստահում և հավատում են մանկավարժական մայր դարբնից ավանդույթներին ու որդեգրած սկզբունքներին:

«Միթե՞լի՜ շրջանավարտներ, ուզում եմ, որ այդ դիմակն իր առաքելությունը շատ շուտ ավարտի, ձեր ողջ կյանքում միշտ ներկայանաք ձեր իրական դեմքով և դիմակ կրեք միայն դիմակահանդեսի ժամանակ: Անկախ ստեղծված իրավիճակից՝ ուզում եմ, որ վստահ քայլերով գնաք դեպի ձեր իղձերի ու նվիրական երա-

զանքների կատարմանը: Վստահ եղեք, հավատալու և այդ երազանքները ձեր մեջ վառ պահելու դեպքում դրանք անկասկած կիրականանան», - ՀՀ-ի հեռակետային վարժարանի շրջանավարտների շնորհավորական ուղերձում նշում է տնօրեն Նաիրա Սաֆարյանը:

«Դիմակի տակ քողարկված այդքան թանկ ժպիտներ, իրական ջերմություն փոխանցելու ողջ ծանրությունը թողեցինք դիմակից դուրս՝ թաց աչքերի վրա», - նշեց Նաիրա Սաֆարյանը: Վարժարանի տնօրենը խոստովանում է՝ ավարտական վկայական հանձնելն ու հրաժեշտ տալը, չգրկախառնվելը, ժպիտներ և ջերմություն չփոխանցելը դժվար էր պատկերացնել, սակայն երկուստեք փորձել են հաղթահարել, այդպես էր թելարդում ստեղծված իրավիճակը: Վարժարանի սաների շատերը վստահեցնում են իրենց ուսումը շարունակելու են Մանկավարժական համալսարանում, քանի որ վստահում և հավատում են մանկավարժական մայր դարբնից ավանդույթներին ու որդեգրած սկզբունքներին:

Քրիստինե ՄԵԼՆՈՅԱՆ



Մագիստրոսական թեզերի համապեղ ղեկավարում

Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի և ՌԴ-ի Благотворительный Фонд «Соединение» չտեսնող-չստղծների աջակցության ակադեմիայի հետ «Наставники и Ученики» նախագծի շրջանակներում շուրջ երկու տարի իրականացվել է համագործակցային աշխատանքներ, այդ թվում նաև մագիստրոսական թեզերի համատեղ ղեկավարման գիտահետազոտական աշխատանքներ:

2019-2020 թվականների մագիստրոսական թեզերի համատեղ ղեկավարմանը ներկայացվել է Անուշ Հարութի Ալախյանի «Բարդ և բազմակի խանգարումներ ունեցող երեխաների հետ աշխատող մանկավարժների դժվարությունները» (Трудности педагогов работающих с детьми с тяжелыми и множественными нарушениями), գիտական ղեկավար՝ հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Թերեզա Ազատյան, և Սոֆի Վազգենի Թորոսյանի «Ձարգացման բարդ և բազմակի խանգարումներ ունեցող (ստղծություն և տեսողություն) երեխաների ընտանիքներին ցուցաբերվող հոգեբանամանկավարժական օգնության համակարգը» (Система оказания психолого-педагогической помощи семьям детей в тяжелых и множественными нарушениями развития (слуха и зрения)), գիտական ղեկավար՝ հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի ղեկավար, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Սիրանուշ Կարապետյան, թեմաներով աշխատանքներ:

Հունիսի 10-11-ին կազմակերպվել է վերոնշյալ մագիստրոսների ամփոփիչ ատեստավորման առցանց հրապարակային պաշտպանություններ, որոնց առցանց տարբերակով միացել է աշխատանքների համահեղինակ «Наставники и Ученики» նախագծի գիտական համակարգող, հոգեբանական գիտություն-

ների թեկնածու դոցենտ, Ռուսաստանի կրթության ակադեմիայի շտաբային մանկավարժության ինստիտուտի փորձագիտական խորհրդի անդամ Իրինա Վադիմիրի Սալոմատինան:

Փորձագիտական խորհրդի անդամ, հոգեբանական գիտությունների թեկնածու դոցենտ Իրինա Սալոմատինան արժևորել է մագիստրոսների կողմից կատարված գիտահետազոտական աշխատանքների խորը վերլուծությունները, հետազոտությունների սահմանած նպատակները և խնդիրները, արդիականությունը, տեսական և գործնական նշանակությունները: Միևնույն ժամանակ փորձագետի կողմից հստակ կարևորվել է հետազոտական աշխատանքների կատարման ինքնուրույնությունը, հետազոտության թեմային համապատասխան տեսանկյունից գործնական տիրույթներում նորարարական մոտեցումների և ստեղծագործական լուծումներ առաջադրելու հմտությունները, որոնք երկու տարվա կտրվածքով պարբերաբար ներկայացվել են մագիստրոսների կողմից:

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամներն ընդգծել են ներկայացված հիմնախնդիրների արդիականությունն ու թերի ուսումնասիրվածությունը Հայաստանի Հանրապետությունում, ինչպես նաև կարևորել համագործակցային աշխատանքների արդյունքում ներկայացված հիմնախնդիրների հետազոտման անհրաժեշտությունը:

Մագիստրոսներն իրենց հերթին կարևորել են մագիստրոսական թեզի պատրաստման աշխատանքների կատարման ողջ գործընթացում գիտական ղեկավարների, ինչպես նաև ՌԴ-ի փորձագիտական խորհրդի անդամների կողմից արժեքավոր խորհրդատվություններն ու բազմաթիվ անհատական վերահսկողությունը, որն իր հերթին հիմնավորում է կատարված աշխատանքի արդիականությունը, տեսական և կիրառական նշանակությունը:

ՔԱՐՈՉՆԵՐԻ ՄՐՑՈՒՅԹ՝ «ԵՐԵԽԱՆ ՄԱՐԴ Է ԵՎ ԸՆԿԵՐ»

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի մանկավարժության ամբիոնն արդեն 8-րդ անգամ հունիսի 1-ին կազմակերպում է քարոզների մրցույթ՝ «Երեխան մարդ է և ընկեր» թեմայով՝ նվիրված երեխաների իրավունքների պաշտպանության օրվան: Այս տարի միջոցառումը համավարակի պատճառով տեղի ունեցավ օնլայն ձևաչափով: Ուսանողների կողմից քարոզ-ուղերձներն ուղղված էին ծնողներին և ուսուցիչներին: Չնայած ստեղծված իրավիճակին՝ մասնակցության հայտ էր ներկայացրել 25 ուսանող: Հանձնաժողովն ընտրել էր համալսարանի առկա և հեռակա բաժինների բակալավրիատի և մագիստրատուրայի 6 ֆակուլտետների 18 ուսանողի քարոզ, որոնք համապատասխանում էին տրված չափանիշներին: Ուսանողները նախապես ծանոթացել էին քարոզներին ներկայացվող պահանջներին և գնահատման չափանիշներին, այն է՝ քարոզի տևողությունը պիտի լիներ 3-5 րոպե, բովանդակությունը պետք է համապատասխաներ թեմային և լսարանին, հաշվի պետք է առնվեր քարոզողի՝ հռետորական արվեստին տիրապետելու մակարդակը, ինչպես նաև մանկավարժական մտածելակերպի և բառապաշարի առկայությունը:

Մրցույթի հանձնաժողովի կազմում էին Սրբուհի Գևորգյանը, ՀԳՄՅ պրոռեկտոր, հանձնաժողովի նախագահ, հ.գ.դ., պրոֆեսոր, Արիս Թովուկյանը, ՀԳՄՅ մանկավարժության ամբիոնի վարիչ, մ.գ.դ., պրոֆեսոր, Լուսինե Պողոսյանը, մ.գ.թ., դոցենտ, Արմենուհի Մանուկյանը, մ.գ.թ., դոցենտ և Լևոն Նազարյանը, մ.գ.թ., դոցենտ:

Այս տարի սահմանվել էին մրցանակներ առաջին տեղի, ինչպես նաև «Հավատարմություն մանկության հիմնախնդիրներին», «Ամենահուզիչ քարոզ», «Իրատեսական քարոզ», «Հռետորական արվեստ»,

«Ունկնդիրների համակարգ» անվանակարգերում հաղթողների համար:

Մրցույթի արդյունքների ամփոփումից պարզ դարձավ, որ առաջին տեղին արժանացել է երկու ուսանող՝ Անահիտ Աղամյանը (Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի սոցիալական մանկավարժություն բաժնի մագիստրատուրայի 2-րդ կուրս) և Միլենա Եղոյանը (Օտար լեզուների ֆակուլտետի ռուսաց լեզու և գրականություն բաժնի բակալավրիատի 1-ին կուրս):

«Հավատարմություն մանկության հիմնախնդիրներին» անվանակարգում հաղթողներն են Նարինե Ավետիսյանը (Սկզբնական կրթության ֆակուլտետի տարրական մանկավարժություն և մեթոդիկա բաժնի մագիստրատուրայի 2-րդ կուրս) և Ալինա Եղիազարյանը (Կրթության հոգեբանության սոցիալական մանկավարժություն բաժնի մագիստրատուրայի 2-րդ կուրս), «Ամենահուզիչ քարոզ» անվանակարգում՝ Գոհար Խաչատրյանը (Սկզբնական կրթության ֆակուլտետի տարրական մանկավարժություն և մեթոդիկա բաժնի բակալավրիատի 2-րդ կուրս), «Իրատեսական քարոզ» անվանակարգում՝ Գայանե Խոսեյանը (Սկզբնական կրթության ֆակուլտետի տարրական մանկավարժություն և մեթոդիկա բաժնի բակալավրիատի 4-րդ կուրս), «Հռետորական արվեստ» անվանակարգում՝ Կարլեն Նազարյանը (Բանասիրական ֆակուլտետի հայոց լեզու և գրականության բաժնի բակալավրիատի 3-րդ կուրս), «Ունկնդիրների համակարգ» անվանակարգում՝ Պէթի Քիլերձեանը (Սկզբնական կրթության ֆակուլտետի տարրական մանկավարժություն և մեթոդիկա բաժնի հեռակա մագիստրատուրայի 2-րդ կուրս):

Քարոզի անցկացման կազմկոմիտե

Կրթությունն անշահախնդիր ներդրում է՝ ի շահ մեր ապագայի

Համալսարան ընդունվելուց առաջ չէի էլ մտածում, որ մեկ տարի անց կսկսեմ առաջին լուրջ քայլերս հեռուստատեսության ոլորտում: Նման պլաններ ունեի միայն ավարտելուց հետո, սակայն ինչպես ասում են՝ «Հարթաթիվ ուրբաթից շուտ եկավ»:



Ամենուր, որտեղ մասնագիտությանս վերաբերյալ տարատեսակ հարցեր են ուղղվում ինձ, միշտ ասում են՝ նախ ես չեմ ընտրել այս մասնագիտությունը, այլ նա՝ ինձ: Այո, վերհիշելով անցած տարիներիս փորձը, եկել եմ այն մտքին, որ մարդիկ ծնվում են իրենց սեփական առաքելության հետ միասին, և տարիների փորձից ու ինքնակրթությունից է կախված արդյո՞ք նրանք իրենց մեջ կգտնեն այդ առաքելությունը:

Իմը՝ աշխարհն է իր իրականության մեջ. իրականությանը ապրելն ու իրականության մասին այլ դիտանկյունից՝ «ռակուրսից» խոսելը: Կրթությունը մեզ շատ բան կարող է տալ, բայց մենք էլ ավելին կարող ենք ստանալ նպատակաուղղված աշխատանքի շնորհիվ: Նպատակներին հասնելու համար պարտադիր չէ «տառապելով սովորել» ու սթափությունը անքուն գիշերների մեջ կորցնել: Կարելի է և ավելի հեշտ, ավելի պարզ ու ավելի հաճելիորեն զբաղվել ինքնագաղափարներով: Համալսարանում մենք պետք է սովորենք միայն մեկ բան՝ հասկանալ, թե որն է մեզ համար ավելի լավ: Ես երբեք չեմ պայքարել՝ հասնելու այն ամենին, ինչն այսօր ունեմ. գիտակից քայլեր ու ժամանակին արված որոշումներս ինձ տվել են այն ամենը, ինչի կարիքն այսօր ունեմ:

Կրթությունն ստանալը հիանալի ներդրում է մեր անձնական աճի համար, որի արդյունքը, սակայն, միանգամից չի երևում: Ուղիղ յոթ տարի ես սովորել եմ նույն մասնագիտությանը, ուր ունցից չըրսը թուլեցում, իսկ երեք տարին՝ համալսարանում: Եվ դա այն դեպքում, երբ լրագրությունը համարվում է փորձի ու աշխատանքի արդյունքում ձեռք բերված մասնագիտություն: Շատերն առանց ակադեմիական կրթության, երկար տարիների փորձի շնորհիվ դարձել են ոլորտի պրոֆեսիոնալներ:

Այդ դեպքում, ապա ինչու են ընտրել ակադեմիական կրթություն ստանալու ուղին: Երեք տարիների ուսումնառությունն ապացուցեց, որ համալսարանն այն վայրն է, որտեղ ես փորձի շնորհիվ եմ դառնալու լրագրող: Լրագրությունը ձեռք բերելու ինձ տարավ փորձառության այն աշխարհ, որտեղ շատերը կուզեցին լինել: Սկզբում հավատոյ չի գալիս, հետո մտածում ես՝ ինչու հենց ես, և միայն մի քանի վայրկյան անց հասկանալով, որ նման հնարավորություն ոչ բոլորին է ընձեռված. պետք է այն բռնել ու բաց չթողնել:

Երկու տարի է, ինչ համալսարանի «Հաջողության բանաձև» հաղորդաշարի լրագրող հաղորդավարն եմ: Երբեք, երբեք չէի պատկերացնի, որ համալսարանի ընտրության հարցը կյանքիս բեկումնային կետերից մեկն է լինելու: Ընդունվում ես ուրիշ նպատակներով, ավարտում՝ արդեն տարիների փորձով ու այլ նպատակներով: Յուրաքանչյուր լրագրող կփաստի խոսքերս. լրագրողն առանց կապերի ու բազմապիսի մարդկանց հետ ժամոթությունների լիարժեք մասնագետ չի դառնա: Առանց մասնագիտությունից սիրելու, առանց այս մասնագիտությանը լուրջ վերաբերվելու, առանց այն հարգելու ոչինչ չի ստացվի: Եվ, արժե, հարգել անգամ արժե մերժել աշխատանքի բոլոր այն հրավերները, որոնք շատ կարճ ժամանակամիջոցում «կստիպեն» չսիրել ընտրությունը:

Համալսարանում սովորելիս դա էլ պետք է սովորենք, հստակ հասկանալ, գիտակցել, թե ինչ աշխատանք է թեք պետք, և թե՞ հիմա պետք է կամավորություն անել՝ հետազայուն նախընտրելի աշխատանքը ստանալու համար, ապա ի գործ:

Այս տարիների ընթացքում ես հասկացա, որ արել եմ կյանքիս ամենաճիշտ որոշումը՝ լսել եմ ներքին ձայնիս ու չեմ վախեցել այն անփորձությունից, որն ունեմ: Չէ՛ որ ամեն ինչ սկսվում է առաջին քայլից:

Սովորելու համար մենք ունենք թե՛ ժամանակ և թե՛ հնարավորություններ: Համալսարանում մենք սովորում ենք գնահատել այդ ժամանակը և օգտագործել բոլոր հնարավորությունները: Վատ կամ սխալ մասնագիտություն չկա, կա միայն բաց թողնված ժամանակ ու չօգտագործված հնարավորություններ: Արժե սովորել գնահատել դրանք, չէ որ կյանքում մենք առաջինը միշտ հիշում ենք այն որոշումները, որոնց շնորհիվ զարգանում ենք:

Կրթությունն անշահախնդիր ներդրում է՝ ի շահ մեր ապագայի...

Սուսիմա ԽԱՉԱՏՐՅԱՆ
Հեռուստալրագրության բաժնի շրջանավարտ

Երեխան մարդ է և ընկեր

Մի՛ լռիր, աշխարհ, որտե՞ղ եք մարդիկ... անտարբերության լուռության ներքո մենք մոռանում ենք մեր ամենօրյակ, ու՛ր են մնացել այն ծնողները և մանուկները, որտեղ սկսվում էր մեր մանկությունը, ամհոգ օրերի խիճը ու ծիծաղը...

Նյութական արժեքներ, անհասկանալի և պարտադրված մոր մշակութային մորթեր, թվային աշխարհ, խելագարության հասնող անցուղաբաժ, որտեղ արժեքակներ են ծնող-երեխա փոխհարաբերությունները, օտարացել են իրար նկատմամբ ընտանիքի անդամները, խառնվել են ծնողների դերերը, գերակա է դարձել մարդ-մեքենա երկխոսությունը:

Ժամանակակից պայմանները և ստեղծված իրավիճակը խաթարել են երեխայի՝ հասարակության մեջ ապրելու, առողջ և անվտանգ միջավայրում ներդաշնակ զարգանալու, իր առողջությանը չվնասող և առանձնահատկություններին համապատասխան կրթություն ստանալու, ցանկացած տեսակի չարաշահումներից զերծ մնալու, ընտանիքում, ծնողների սիրով շրջապատված մեծանալու և, ի վերջո, լիարժեք մանկություն ունենալու իրավունքը:

Մանկությունը մի տեսակ դարձել է մեծերի պարտադրանք, որտեղ չկա հարգանք երեխայի ժամանակի նկատմամբ:

Հարգելի՛ ծնողներ, ուզում եմ հարցնել՝ ո՞վ է երեխան, ի՞նչ է մանկությունը և որտե՞ղ եք դուք, որտե՞ղ ենք կորցրել մեր արժեքները:

Սիրելի՛ ծնողներ, արդյո՞ք ձեզ հարց եք տվել զոնե մեկ անգամ՝ երեխան ուզո՞ւմ է այսպես սովորել, երեխան ուզո՞ւմ է իր փոխարեն ծնողներն ընտրեն, երեխան ուզո՞ւմ է պարտադրված գնահատվել, դառնալ ձեր չստացված երազանքների իրագործողը:

Պայմանավորված ժամանակակից իրավիճակով՝ դիմում եմ ձեզ կոչով՝ արժևորե՛ք երեխայի մանկության իրավունքի իրացման գործընթացում ընտանիքի, ծնող-երեխա ընկերական փոխհարաբերությունների դերը:

Երեխան մարդ է, երեխան ընկեր է: Մի՛ խաթարեք երեխայի մանկություն ունենալու իրավունքը, թույլ տվե՛ք ներդաշնակ զարգանալ, լինել սեփական կյանքի ուղին ընտրողը, մի՛ պարտադրեք, մի՛ ստիպեք, մի՛ վնասեք, ընդունե՛ք նրան որպես ընկեր և կառուցե՛ք համագործակցային փոխհարաբերություններ... յուրաքանչյուր երեխա ունի ինքնուրույն լինելու պահանջները:

Երեխան ձեր սեփականությունը չէ, ձեր կամայականությունների գոհը չէ, երեխան իրավունք ունի իր կյանքի հարցում լինել ինքնավար, սովորել իր հաջողություններով և անհաջողություններով, երեխան սոցիալական կարգավիճակ ստանալու իրավունք ունի՝ սեփական արժեքների ճանաչման և ինքնաճանաչման միջոցով, հարգել երեխայի ժամանակը, կառուցե՛ք վստահելի հարաբերություններ, մի՛ ամուսնեք երեխայի անհատականությունը: Երեխան արժեք է, երեխան մեր որակների կրողն է և միաժամանակ մեր շարունակությունն է, սակայն մոր գաղափարներով, մոր շնչով: Երեխան ներկա է:

Պետք չէ մոռանալ, որ երեխան ունի հոգի, սեփական դա-

տողություն, հակումներ, բնավորության գծեր, մտածելու եղանակներ: Թույլ տվե՛ք երեխաներին՝ ապրել ուրախ ջանքերով, մանկական անհոգությամբ, տվե՛ք իրենց ժամանակը սնորհներով հնարավորություն: Հեռու պահե՛ք երեխաներին կեղծիքից և պարտադրանքներից, հրամաններով ու սպառնալիքներով մի՛ խաթարեք երեխայի մանկությունը: Անհատական մոտեցե՛ք յուրաքանչյուր երեխայի: Երեխան մարդ է, երեխան ձեր ընկերն է:

Արժևորե՛ք ձեր երեխայի կյանքում սերն ու զուրգուրանքը: Սիրե՛ք երեխաներին իրենց առանձնահատկություններով: Հարգե՛ք նրանց մարդկային արժանիքները, գիտակցե՛ք, որ երեխան ունի հոգի, միտք, երեխան անհատ է, երեխան ձեր ընկերն է: Բռնությունն ու կամայականությունը փոխարինե՛ք սիրով, համակրանքով, մտերմությամբ և փոխըմբռնումով, երեխան կարիքն ունի ձեր պաշտպանության:

Մի՛ մոռացե՛ք, որ դաստիարակությունը կախված է երեխայի դերի նկատմամբ ունեցած հավատից և այն համոզմունքից, որ երեխայի ներսում ամփոփված է զարգանալու կարողություն: Ընկերական փոխհարաբերություններ կառուցելու համար կարևոր է մանկավարժական կրթությունը, փորձե՛ք առավելագույն ճանաչել ու հասկանալ այն հոգին, ում կյանք տվողը դու՛ք եք: Բացահայտե՛ք ձեր երեխաների հնարավորությունները, հետաքրքրությունները, պահանջները, մտքերը ու հակումները, թույլ տվե՛ք լինել ստեղծագործ, ներարկե՛ք սեփական ուժերի նկատմամբ հավաստ: Ազատություն տվե՛ք ձեր երեխային, սակայն մեծակ մի թողե՛ք, պայմաններ ստեղծե՛ք սեփական կյանքին ակտիվ մասնակից լինելու համար, սովորեցրե՛ք իրավունք, պատասխանատվություն գործած արարքների համար: Երեխան իրավունք ունի մեծերի պես հավասար հարգվելու, վարվել նրանց հետ, ինչպես մեծերի հետ, հարգե՛ք երեխայի մեջ մարդկային արժանիքները, մտերմացե՛ք նրանց հետ, փոխադարձաբար փոխազդե՛ք, սովորե՛ք և սովորեցրե՛ք, նպաստե՛ք անհատականության ազատ ծաղկմանը, մի՛ կաղապարեք երեխային: Թույլ տվե՛ք երեխային ճանաչել իր ես-ը: Սերը հավատ է և ոչ պարտադրանք:

Կարողացե՛ք ապրումակցել և հավատացե՛ք ձեր երեխայի յուրաքանչյուր հաջողությանը, խթանե՛ք ստեղծագործ ոգու թռիչքը, ոգևորե՛ք և խրախուսե՛ք: Նպաստե՛ք երեխայի հարցափորձայն, հարմարվե՛ք երեխային, ճանաչե՛ք ձեր երեխայի առանձնահատկությունները, ճանաչե՛ք ձեր երեխային, ցույց տվե՛ք ինքնուրույնության ճանապարհը, համագործակցե՛ք մանկավարժների հետ:

Եվ ի վերջո, հիշե՛ք, երեխան յուրաքանչյուր ծնողի իրական հավատն է: Անկեղծ եղե՛ք, համբերատար և հանդուրժող: Երեխան ամենը է, երեխան հավասար իրավունքներով ձեր նման մարդ է, երեխան ընկեր է:

Անահիտ ԱՂԱՄՅԱՆ
Կրթության, հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետ, Մագիստրատուրայի 2-րդ կուրս, Սոցիալական մանկավարժ



ՖԵԼՍՈՒԲՈՒՄ ԳՐԱՊԻԱ

Ճերմակ Ավարայրում այլևս մեռակ չենք

Կարեն ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ

Խ. Արուստյանի անվան վարժարանի տնօրեն (Ֆրանսիա, Մարսել)

Հաստատվեց ամենաթանկ և ամենաարժեքավոր, աներևույթ այբբենաձոր կամուրջն Արուստյանի անունը կրող երկու հաստատությունների միջև՝ Հայկական պետական մանկավարժական համալսարանի բանասիրական ֆակուլտետի և Մարսելի Արուստյան վարժարանի:

Համագործակցության առաջին հիմնաքարը, հեռավար տարբերակով, մեր բոլոր ուսուցչուհիների հետ միասին դրվեց ՀՀ լավագույն մասնագետների մասնակցությամբ՝ Խ. Արուստյանի անվան ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետի հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Բ.Գ.Գ., պրոֆ. ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ալիսա Դուրխանյան, բանասիրական ֆակուլտետի ղեկավար Բ.Գ.Բ., դոցենտ Աշոտ Գալստյան, փոխղեկավար Բ.Գ.Բ., դոցենտ Նաիրա Խաչատրյան, դասախոսներ դոցենտներ՝ Ռուզան Դուրխանյան, Լիլիթ Հովսեփյան, Գայանե Մարոյան, ամբիոնի մասնագետ Արևիկ Արախանյան, ղեկավար օգնական Աննա Մարգարյան:

Ամփոփելով, որոնք անմիջապես լսեցին մեր խնդիրներն ու պահանջներն ապագա ուսուցումն ավելի արդյունավետ դարձնելու համար և ներգրավվեցին կրթական, գիտական, մշակութային, կամավորական աշխատանքի զարգացման ուղղված, մեր վարժարանի կրթական բարեփոխումներին, որպես տրամաբանորեն ամենակարևոր բաղադրիչ, միտված՝ մերօրյա արդիական ուսուցման որակի կայուն զարգացմանն ու խթանմանը:

Առանձնակի ջերմությամբ շնորհակալ եմ Ձեզ՝ բոլորիդ, Սփյուռքի հայապահպանության կարևորագույն գործը մեզ հետ միասին ստանձնելու համար: Աստված Ձեզ պահպանե՛ր՝ ազգի մերօրյա վարդաններ, Եղիշներ, Խորենացիներ:

Այսպիսով՝ նոր ուսումնական տարի, նոր մեթոդներ, նոր լուծումներ և նոր ուսման ծրագիր:

Բոլոր մեր սաներին բարի հանգիստ, իսկ ուսուցիչներին ի գործ: Հ.Գ. Նոր ուսումնական տարում Մանկավարժական համալսարանի Բանասիրական ֆակուլտետը Մարսելի «Խաչատուր Արուստյան» վարժարանի հայոց լեզվի և գրականության ուսուցիչներին կառավարող դասագրքեր, առաջավոր դասանմուշներ, ուսումնական այլ նյութեր: Ուսուցիչներին կներկայացվեն նաև ուսումնական տեսադասեր և նորացված մեթոդական ցուցումներ:

ԸԱՅՏՆԻԻՅ ԴԵՊԻԱՆԸԱՅՏԸ, ՊԱՐԶԻՅ ԴԵՊԻԲԱՐԴԸ...

Երկար մտորումներ և, վերջապես, սպասված ընտրություն... Յուրաքանչյուր դեռահաս անցնում է այս ճանապարհը, երբ ցանկանում է ընտրել իր ապագա մասնագիտությունը: Ես նույնպես բացառություն չեմ, սակայն մասնագիտությունն ընտրել եմ դեռևս կրտսեր տարիքից: Համոզված լինելով իմ ընտրության մեջ՝ քայլերս ուղղեցի դեպի Խաչատուր Արուստյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան... Մեծ սպասումներով ընդունվեցի համալսարանի Սկզբնական կրթության ֆակուլտետի տարրական մանկավարժության և մեթոդիկայի բաժինը: Այսօրվա պես հիշում եմ առաջին օրը, երբ արժանացա ջերմ ընդունելության. ինձ անմիջապես ընդգրկեցին համալսարանական մեծ ընտանիքի մեջ: Համալսարանին հարմարվեցի շատ արագ, քանի որ իմ ավագ ընկերները պատրաստակամ էին, օգնում ու խորհուրդներ էին տալիս ցանկացած հարցում:

Այսպես սկսվեցին համալսարանում ուսանելու տարիներս: Առաջին առավելությունը, որ նկատեցի, բարձր առաջադիմություն ունենալու դեպքում անվճար համակարգում սովորելու հնարավորությունն էր: Սկզբնական շրջանում սովորել եմ վճարովի համակարգում, սակայն հենց առաջին կուրսում համալսարանը հնարավորություն տվեց ուսումնա շարունակել անվճար համակարգում: Սա ինձ համար մեծ խթան դարձավ բարձր առաջադիմությունը մշտապես պահելու և համալսարանի սպասումներն արդարացնելու համար:

Համալսարանի առավելություններից է նաև classroom կրթական հարթակը: Այստեղ տեղադրվում էին դասախոսությունները, որոնց ծանոթանում էի նախապես և քննարկում դասերի ընթացքում: Ինտերակտիվ դասախոսությունները դասն ավելի հետաքրքիր և բովանդակալից էին դարձնում: Համալսարանում իրականացվում էր ուսանողակենտրոն կրթություն, սովորելու ցանկություն ունեցող յուրաքանչյուր ուսանողի համար բաց էին դեպի գիտելիքի աշխարհ տանող բոլոր ճանապարհները:

Համալսարանում գրեթե բոլորը լսարաններն ապահովված են անհրաժեշտ գույքով և համապատասխան տեխնիկայով, որոնց միջոցով կարողանում էի ներկայացնել իմ կատարած աշխատանքները: Իսկ մուլտիմեդիոն լաբորատորիաներում անցկացրած լաբորատոր աշխատանքներն ինձ համար ամենաիշխարժանն ու մնայունն են:

Համալսարանն ունի դասախոսական հիանալի և պրոֆեսիոնալ անձնակազմ: Բոլոր դասախոսներն ուսուցանելիս հաշվի էին առնում յուրաքանչյուրիս անհատականությունը, ուղղորդում էին և օգնում, սովորեցնում մտածել, վերլուծել, դատողություններ անել տարբեր հարցերի շուրջ:

Երկրորդ և երրորդ կուրսերում տրվեց մանկավարժական պրակտիկայի մեկնարկը, որն ունեցավ հազվագյուտ և բովանդակալից ընթացք: Պրակտիկան մանկավարժական համալսարանի հիմնա-

կան և շատ կարևոր բաղադրիչն է կազմում: Երկու ուսումնաճանաչողական, կիրառական և ամփոփիչ պրակտիկաների շրջափուլերն ամփոխարինելի դեր ունեցան իմ մասնագիտական կայացման և մանկավարժական փորձի ձեռքբերման գործում: Եթե մինչ պրակտիկայի մեկնարկը չնչին կասկածներ ունեի մասնագիտության ընտրության հարցում, ապա վստահ կարող եմ ասել՝ պրակտիկայի մեկ շրջափուլն էլ բավական էր, որ այդ կասկածներս փարատվեին:

Մասնագիտական առարկաների հիմնարար և խոր ուսումնասիրում՝ մատչելիության սկզբունքով: Դասախոսների և նրանց կատարած ամենացորդ աշխատանքի շնորհիվ ձեռք բերեցի մնայուն գիտելիքներ, կարողություններ, որոնք վերածեցի հմտության: Ամեն անգամ բացահայտում էի նոր, հայտնիից զնուն դեպի անհայտը, պարզից դեպի ավելի բարդը:

Համալսարանում ուսումնասիրեցի ոչ միայն մասնագիտական առարկաներ, այլև լրացուցիչ ու շատ հետաքրքիր կամընտրական առարկաներ, որոնք ինձ բազմակողմանի զարգանալու հնարավորություն ընձեռեցին:

Մասնակցեցի վերապատրաստումների «Շախմատ» առարկայից և ստացա դարձում դասավանդելու իրավունք: Դեռևս երկրորդ կուրսից ինձ հնարավորություն տրվեց և՛ սովորել, և՛ աշխատել որպես շախմատի ուսուցչուհի:

Եվ վերջապես չորրորդ կուրս... Ամենապատասխանատու շրջանը՝ ամփոփիչ պրակտիկա և քննություններ, ավարտական աշխատանքի պաշտպանություն: Բնականաբար, սկզբնական շրջանում մի փոքր վախ և անորոշություն ունեի ավարտական աշխատանքը գրելու հետ կապված: Սակայն իմ գիտական ղեկավարը՝ Ջուլիետա Գյուլամիրյանը, իր խորհուրդներով, հոգատարությամբ և մեծ սիրով աշխատեց ինձ հետ: Ավարտական աշխատանքը սկսեցի գրել դեռևս ամռանը և արդեն սեպտեմբեր ամսին պատրաստ ունեի տեսական հատվածը: Հոկտեմբերին, երբ մեկնարկեց ամփոփիչ պրակտիկան, ավարտին հասցրի նաև հետազոտական հատվածը:

Մտտեցավ երկար սպասված ամփոփիչ առետավորման քննության օրը: Այն ընթացավ հիանալի և անկաշկանդ մթնոլորտում: Առաջին անգամ ամփոփիչ քննությունն անցկացվեց անսովոր պայմաններում՝ առցանց ձևաչափով: Սա էլ իր հետաքրքրությունն ու յուրահատկությունն ուներ, որը կմնա իմ հիշողություններում դեռ երկար ժամանակ: Իսկ կարմիր դիպլոմը, որ տարիների իմ ջանքի, իմ և դասախոսների հաջողված համագործակցային աշխատանքի արդյունքն է, կօգնի հաստատուն քայլերով մտնել նոր կյանք և բացահայտել մանուկների զարմանահարաշ աշխարհը:

Լարիսա ՄԿՏՉՅԱՆ
Սկզբնական կրթության ֆակուլտետի 2019-2020 ուստարվա շրջանավարտ



Սիրելի՛ ընթերցող, ես կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի սոցիոլոգիա մասնագիտության 2019-2020 ուսումնական տարվա շրջանավարտ եմ: Երկարուձիգ 4 տարիներն անցան ակնթարթի պես. կարծես երեկ էր, երբ լրացրի դիմորդի հայտը: Երբ դեռ դպրոցական էի՝ 10-11 տարեկան, մայրիկիս հետ համալսարանի կողքով անցնելիս համառորեն պնդում էի, որ հենց Խաչատուր Արուստյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան եմ ընդունվելու, դառնալու եմ լավագույն մասնագետ ու զբաղվեմ սերնդակրթությամբ: Ի ուրախություն ինձ՝ համալսարան ընդունվեցի գերազանց գնահատականներով և գերա-

ՈՉ ԹԵ ՄԱՍ ԲԱՐՈՎ, ԱՅԼ՝ ՄԻՆՉ ՆՈՐ ԸԱՆԴԻՊՈՒՄ

զանց սովորելու ծանր, բայց հաճելի բեռը ուսերիս տարա 4 տարի շարունակ:

Եթե երբևէ ինձ հարցնեն, թե որոնք են եղել կյանքիս լավագույն տարիներն, անշուշտ, կպատասխանեմ՝ համալսարանական: Համալսարանի շնորհիվ ես ձեռք բերեցի հավատարիմ ընկերներ, ծանոթացա ոլորտի լավագույն մասնագետների հետ, սովորեցի կարևորել և արժևորել այն կրթությունը, որն այսօր ստանում է իմ սերունդը: Ուսումնառության տարիներին հասցրել եմ մասնակցել մի շարք գիտաժողովների, միջազգային ծրագրերի, կատարել եմ կամավորական աշխատանքներ, ինչպես նաև ամենամեծ ձեռքբերումներս եղել են գիտական հոդվածները:

Ավարտական տարվա լարվածությունն ու ծանրաբեռնվածությունը կրկնապատկվեցին, երբ ողջ աշխարհում, ինչպես նաև մեր երկրում, տարածվեց սարսափելի համաճարակը: Համալսարանի լսարանային կյանքին եկան փոխարինելու հեռավար ուսուցման միջոցները, և կենդանի շփումը տեղափոխվեց առցանց տիրույթ: Չնայած այն բոլոր դժվարություններին, որոնց հետ ստիպված էին առնչվել ուսանողներն ու դասախոսները, կրթական գործընթացը շարունակվեց: Երբեք չէի կարող պատկերացնել, որ համալսարանը կավարտեն մնացած բացառիկ պայմաններում, և երբեմնի երազանքս՝ պաշտպա-

նել ավարտական աշխատանքս ամբիոնից, ունենալ այն զգացողությունները, որոնք ունեցել եմ համալսարանական ավագ ընկերներս, կմնա անկատար, փոխարենն այս բարդ և տևական գործընթացը տեղի ունեցավ տնային պայմաններում՝ առցանց: Առաջին հայացքից կարող էր թվալ, որ նման պայմաններում լարվածությունն ավելի քիչ կլիներ, ավելի հեշտ կլիներ զսպել հույզերը, բայց պատկերացրեք, որ առցանց պաշտպանության դեպքում սեփական մտքերն ու գաղափարները ձևակերպելն ու լսարանի դատին հանձնելն ավելի դժվար էր և կաշկանդող: Երկար կարելի է խոսել հեռավար ուսուցման դրական և բացասական կողմերի մասին, սակայն անհաղթահարելի փորձություններ չկան, միայն պետք է կամքի ուժ և տքնաջան աշխատանք, և այս ամենի միջով էլ ստիպված եղա անցնել նաև ես՝ գերազանց պաշտպանվելով ավարտական աշխատանքս: Շուտով իմ ձեռքում կլինի երկար սպասված, բաղձալի կարմիր դիպլոմը: Ափսո՛ս, որ չկարողացա կանգնել համալսարանական ամբիոնի մոտ...

Իսկ համալսարանին ասում եմ ոչ թե՛ մնաս բարով, այլ՝ մինչ նոր հանդիպում:

Սեդա ՊԵՏՐՈՍՅԱՆ
Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի 2019-2020 ուստարվա շրջանավարտ

Լեյակ-յասաման...

«Դասասենյակին մաքրություն ու թարմություն է հարկավոր», - մտածում էր ուսուցիչը և պայուսակը դասավորում. այնտեղ գրքեր էին, որոնք, ցավոք, «թարմություն» չուներին:

Ձանգը հնչելուն պես նա այն դասարանում էր, որից մի քանի րոպե առաջ ուղղակի բողոքում էր: Երբ աշակերտները ներս մտան, սեղանին բազմերանգ ու բուրավետ յասամաններ տեսան. հիացմունքը պատեց բոլորին, ուսուցիչն էլ ցնծում էր երանությունից:

Դասը միանգամից սկսել, ավա՜ղ, չստացվեց. աշակերտները ծաղկի մասին հարցեր էին տալիս ուսուցչին. հենց դա էր պետք՝ անհագուրդ ցանկություն ուներ իր սիրելի ծաղկի մասին խոսել, պատմել, զգացածն ու իմացածը կիսել...

Շատ սպասեցնել չտվեց. «Երբ փոքր էի, հաճախ էի բակ իջնում, ոչ խաղալու, այլ յասամաններ քաղելու համար: Չեք հավատա, եթե ասեմ, որ ծնողներին ցուցաբերում էի՝ տանը յասամաններ ածեցնեմ. թերևս խենթ միտք էր»:

Աշակերտների աչքերը փայլում էին, գլուխը սեղանին հակած աշակերտներ էլ կային: Ուսուցիչը շարունակեց. «Ես ինձ անսահման երջանիկ էի զգում, երբ գտնում էի հինգ ծաղկաթերթով յասամանի ծաղիկ, հետո այն խնամքով թաքցնում էի գրքի թերթերի արանքում: Դրանով չէի բավարարվում, անընդհատ ուզում էի լսել այդ ծաղկի մասին գրույցներ, զգալ բույրը... Մի օր էլ արթնացա ու սկսեցի պատմություններ հորինել, իսկ իրականում դրա կարիքը չկար. մայրս հետաքրքիր մի բան պատմեց. «Մի անգամ զարմանալի աստվածուհին, լուսաբացին արթնացնելով արևին ու նրա հավատարիմ ընկերներից ծիածանին, խառնում է գունագեղ ծիածանի շողերն ու ճառագայթները, հետո այդ սքանչելի խառնուրդը չքնաղ աստղիկների տեսքով առատորեն շաղ է տալիս ակունքներ, մարգերի և ծառերի ծյուղերի վրա: Եվ ամեն տեղ, ուր ընկնում էին այդ աստղիկները, հայտնվում էին անուշաբույր ծաղիկներ՝ սպիտակ, կապույտ, մանուշակագույն. դրանք յասամաններ էին»»:

Աշակերտներից մեկն էլ առաջ ընկնելով սկսեց պատմել. «Ասում են՝ մախկնուն յասամանը կոչում էին դրախտի ծառ, և մի հավատալիք կար. այն տանը, որի կողքին աճում է այս չքնաղ ծաղիկը, սերը հարատև կլինի...»: Ամեն ինչ միախառնվել էր. չէին խոսում, միայն շշուկներ էին...

Տարիներ են անցել... Ուսուցիչն այլևս չի կարողանում բակ իջնել. ոտքերը այն ուժը չունեն: Նա այժմ բավարարվում է յասամանի այն հինգ ծաղկաթերթով, որը վաղուց խնամքով թաքցրել էր գրքի թերթերի արանքում...

ԱՆՆԱ ԿՈՍՏԱՆՅԱՆ
Բանասիրական ֆակուլտետ, բակլավոր,
2-րդ կուրս

Կորոնավիրուսային մեկուսացման ժամանակը որոշեցի ճիշտ օգտագործել և գրուցել մեր համալսարանի Բանասիրական ֆակուլտետի այս ուսումնական տարվա գերազանցիկ շրջանավարտ Ամալյա Նավասարդյանի հետ: Մեր հեռավար, բայց հաճելի գրույցից հասկացա, որ նա արդեն հասցրել է կարոտել բուռը:

Ամալյայի խոսքում անհնար էր չնկատել այն սերն ու անսահման հարգանքը, որ տածում էր համալսարանի նկատմամբ:

«Դեռ մանկուց սիրել եմ ընթերցել. գյուղի գրադարանից դուրս չէի գալիս, որոշել էի դառնալ բանասեր: 10-րդ դասարանում տատանվում էի անգլերենի և հայոց լեզվի միջև, բայց խիզախեցի ընտրել բանասերի մասնագիտությունը: Միասնական գրավոր քննությունից հավաքեցի 18.75 միավոր, հստակ որոշել էի մանկավարժ դառնալ, քանի որ մանկուց տարբեր ծրագրերի են մասնակցել, կամավոր են եղել, սիրել եմ աշխատել երեխաների հետ: Ես կարող էի ընտրել երևանի պետական համալսարանը, որովհետև բարձր միավորներ էի ստացել, բայց ընտրեցի սիրելի ՀՊՄՀ-ն: Արդեն ավարտել եմ, բայց եթե նորից կանգնեի ընտրության առաջ, էլի կընտրեի Մանկավարժական համալսարանը, - ասում է Ամալյան սիրով ու ակնածանքով: - Շատ են սիրում մասնագիտությունս: Համալսարանում ես գործնականորեն ճանաչեցի մայրենի լեզվի անցած ճանապարհը, յուրացրի հայ գրականության պատմությունը, կարդացա՞մ գրքերի թիվն ավելացավ հարյուրներով, բառապաշարս ևս հարստացավ, աճեցի, կայացա, զարգացա, և հասարակության համար, կարծում եմ, օգտակար մեկն եմ, ով պատրաստ



ԱՐԴԵՆ ՀԱՅՅՐԵԼ ԵՄ ԿԱՐՈՏԵԼ ՀԱՄԱԼՍԱՐԿՆԵՐ

է իր փորձը, գիտելիքները, հմտությունները կիսել ու կրթել սերունդներին»:

Հետաքրքիր էր լսել՝ արդյո՞ք արդարացան Ամալյայի սպասելիքները: Հաճելի էր լսել, որ նրա սպասելիքներն արդարացել են. «Միանշանակ արդարացան նաև ծնողներիս ակնկալիքները: Սկզբում մի փոքր բարդ էր, առաջին կուրսում մտածում էի՝ ավելի լավ կարող էր լինել, բայց մի փոքր ուշ հասկացա, որ մնացած բուհերը ևս ամթերի չեն, սիրեցի բուհը, հարմարվեցի, այն դարձավ իմ երկրորդ տունը, որտեղ ես ժպտում էի, լաց լինում, ուտում, սովորում: Իսկ ահա, երբ արդեն ավարտել եմ, հստակ կարող եմ ասել, որ հսկայական գիտելիքների պաշար ձեռք բերեցի, հիանալի ընկերներ, ջերմ հարաբերություններ ձևավորեցի դասախոսներիս հետ, ովքեր մշտապես մեր կողքին են եղել, օգնել են և աջակցել»:

Ամալյան վստահեցրեց, որ իր ստացած գիտելիքների պաշարն անսպառ է: Լավագույն դասախոսների շնորհիվ գիտելիքները հարստացան լեզվաբանական տերմիններով, երևույթներով, կանոններով, յուրացրեց քերականությունը, սիրելի բնագավառ դարձավ հայոց լեզվի պատմությունը, որին էլ վերաբերում է ավարտական աշխատանքը ևս այս ոլորտում է իրականացրել:

«Արդեն հայ հին, միջնադարյան, նոր և նորագույն գրականության փուլերին ծանոթանալիս խորապես ուսումնասիրեցի հայ հեղինակներին, նրանց ստեղծագործությունները, շատերի համար անհմատ թվացող անգիրները ես մեծ հաճույքով էի սովորում ու վերլուծում... առ այսօր հիշում եմ և ժպտում:

Չորրորդ կուրսում սփյուռքահայ գրականությունն ինձ համար մեծ հայտնություն էր: Մի փոքր բարդ էր սկզբից

կարդալը, հասկանալը, բայց, իհարկե, իմ շատ սիրելի գրականագետների շնորհիվ հաղթահարեցի, ընթերցեցի, բացահայտեցի ու անչափ սիրեցի սփյուռքահայ հեղինակներին:

Գեղեցիկ հուշեր ունեմ նաև կապված ոչ մասնագիտական առարկաների հետ, թերևս դրանք էլ իրենց ներդրումն ունեցան արժեհամակարգիս ձևավորման գործում: Խոսակցական անգլերենս զարգացնելու համար շնորհակալ եմ օտար լեզուների դասախոսներին, - հավելեց Ամալյան:

- Որքան տարիներն անցնում են, այնքան ավելի շատ ենք կարոտում այն ամենին, ինչն անցյալ է դառնում... Ես արդեն կարոտում եմ այն ամենին, ինչին առնչվեցի այս տարիներին:

«Իրավիճակով պայմանավորված՝ երեք ամիս է արդեն, ինչ տանն եմ, ավարտական պաշտպանությունները ևս հեռավար իրականացան, հասցրի կարոտել թե՛ բուհը, թե՛ ֆակուլտետը, թե՛ դասախոսներին, թե՛ կուրսընկերներին, թե՛ լսարանները: Կարոտում եմ նաև այն ճանապարհը, որն ինձ դեպի համալսարան էր տանում, կարոտել եմ այն այգին, որտեղ կուրսընկերներին հետ խենթություններ էինք անում: Կարոտել եմ նաև ճաշարանը, խանութները, համալսարանի դիմացի ծաղիկները, նույնիսկ անվտանգության աշխատակցին...»:

Ամփոփելով՝ Ամալյան ապագա բանասերներին մաղթեց երջանիկ ակնթարթներ, քաջառողջություն, երազանքների իրականացում: Չորրորդեց, որ ամեն վայրկյանը օգտագործեն՝ սովորելու, բացահայտելու, ճանաչելու, ուսումնասիրելու համար»:

Եյուրթ պատրաստեց Լիլիթ ՎԱՐԴԱՆՅԱՆԸ
Բանասիրական ֆակուլտետ, 3-րդ կուրս

ԶՐՈՒՅՑ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏ

«Ես քեզ սիրում եմ, հայրի՛կ, թո՛ւյլ տուր, որ ես զգամ քեզ: Ես քեզ սիրում եմ, մայրի՛կ, օգնի՛ր, որ ես գտնեմ ինձ, բայց ես քեզ եմ փնտրում, ուսուցի՛չ, օգնի՛ր, որ ես բացահայտեմ ինձ ու աշխարհը»:

Նա քեզ է փնտրում, ուսուցի՛չ. քեզ՝ որոնելու, քեզ գտնելու ու քեզ հետ մտածելու հավատով է լցվում այն աշխարհը, որտեղ հարցերը շատ են, պատասխանները՝ միադիմի՝ երեխան ուժ է: Ես արդեն աշակերտ չեմ, գուցե երեխա էլ չեմ, թեև հիշում եմ ինձ երեխայությանս պատկերների մեջ, որտեղ ամենուր ես շրջապատված էի ուրախ ժպիտներով, մարդկանց ուղեկցությամբ, բայց միաժամանակ ես որոնում էի՝ քեզ գտնելու ու քեզ հետ ընկերանալու ակնկալիքով:

Տեսակդ, ուսուցի՛չ, ինձ հանդիպած քո այդ տեսակը վարակիչ էր, և ես կամքիցս անկախ ձգտեցի դառնալ այդ տեսակի լավագույն կրողներից: Հիմա դառնում եմ:

Դու այստե՛ղ ես, և դու այստեղի՛ց ես, իմ ուսուցի՛չ:

Եկել եմ այսօր խոսելու մեր ամենօրյա գրույցի կենտրոնի՝ երեխայի մասին: Նա ծնվում է, որ աշխարհը սիրի իրեն, ծնվում է, որ իր լույսով լուսավորի աշխարհը, նա ձևավորվում է որպես մարդ, աշխարհ է գալիս, որովհետև ընկերանում է այս կյանքի հետ և որոշում է իր ծնունդով պայմանագիր կնքել նրա հետ: «Ինձ շատ հարազատ օդ են շնչում, բայց կարծես անձանոթ մարդիկ են, նրանց չեմ տեսել», - ասում է երեխան, բայց նրան ոչ ոք այդպես էլ չի լսում: Թերևս սա երեխայի

ու մարդու առաջին լուրջ բախումն է, երբ նա իր ծիցով ծանոթություն է ակնկալում, իսկ նրա լացին ի պատասխան լսվում է ինչ-որ ծանոթ ձայն՝ տղա՞՛ էր: Ու այս դիպվածով էլ սկսվում է երեխայի կյանքի շրջան. նա երազում է, իսկ մեքք անում ենք ամեն ինչ՝ իսպառ ոչնչացնելու երազելու նրա իրավունքը: Ի վերջո, նա մարդ է, չէ՞, իսկ մարդիկ սիրում են երազելով, պարուն են երազելով, ուտում են ու հագնում են երազելով: Ուրեմն, ուսուցի՛չ, արի բռնեք երեխայի ձեռքից ու երազեք միասին: Այ հիմա՛՛ հենց այս պահին, ի՞նչ անցավ քո մտքով, պատմի՛ր այդ մասին քեզ հանդիպած առաջին երեխային ու երազեք միասին: Ուզում եմ, որ հաճախ, շատ հաճախ հարցնեք երեխային՝ իսկ դու ուզո՞ւմ ես: Եկե՛ք երեխային սովորեցնեք ներկայացնել իր ուզածը, իսկ դրան հասնելու համար մենք պետք է նրա համար ընկեր լինենք, որովհետև միայն իսկական ընկերոջը կարող ես պատմել սեփական ցանկությունների մասին: Իմ սիրելի՛ ուսուցի՛չ, արի՛ այսօր քայլ կատարե՛ք՝ ճանաչելու երեխային որպես մարդ, հասկանալու նրան հուզող խնդիրներն ու զգալու ապրումները:

Ինչ-որ տարիքում ես սկսեցի առանձնանալ. «Ինձ ոչ ոք չի հասկանում, ես մեկն եմ և չգիտեմ ում հետ խոսել», - մտածում էի ես: Ուզում էի, որ կոտրվեք այն պատմե՛լը, որը բաժանում էր ինձ իմ ուսուցիչներից, ուզում էի գրուցել:

Ուսուցի՛չ, արի՛ այսօր գրուցե՛ք երեխայի հետ, հաճախ երկխոսե՛ք նրա հետ,

լսե՛ք նրա կարծիքը: Եվ մեր գրույցի մեջ սեր ու հավատ ավելացնե՛ք:

- Արա՛մ, շատ գեղեցիկ է սանրվածքդ, այն քեզ շատ է սազում:

- Շնորհակալ եմ, - պատասխանում է Արամը ուսուցչին:

Թվում է՝ հասարակ ու առօրեական երկխոսություն է ուսուցչի ու աշակերտի միջև, բայց հենց այս սովորականի մեջ էլ թաքնված է գնահատելու, արժևորելու արվեստին տիրապետելու կարողությունը:

Ուսուցի՛չ, արի՛ սովորեցնե՛ք երեխային՝ գնահատել, արժևորել աշխարհի, իսկ դրա համար արի՛ այսօր մենք միասին արժևորենք մեր աշխարհը՝ երեխային: Իսկ դա ամենք՝ պարզապես ասելով, որ նա երեխա է և ունի խոսելու իրավունք, որ նա երեխա է և ունի կարծիքներ ունենալու իրավունք, և վերջապես, որ նա երեխա է և ունի հակադրվելու իրավունք:

Երեխան տիեզերքի նվերն է մեր մոլորակին: Եկե՛ք այսօր և հիմա պայմանավորվե՛ք, որ չեք խոչընդոտելու երեխայի այն բոլոր հուզական ապրումներին, որոնցով նա ձևավորվելու է ազատ, կամային ու վճռական, թողնելու ենք, որ նա ինքնուրույն ճանաչի աշխարհը, նրան վերադարձնելու ենք ինքնուրույն ձևավորվելու իր իրավունքը: Այդ հարցում մենք լինելու ենք միայն օգնողներ և ոչ պարտադրողներ ու թելադրողներ: Ուսուցի՛չ, արի՛ մեր աշակերտին չպարտադրե՛ք ճիշտ պարելու բանաձևերը, արի՛ նրան տանք իր կյանքը կազմակերպելու բանալիներ ու օգնե՛ք նրան փականը բացելիս:

Երեխայի հետ մատե՛ք կողք կողքի, նրան ցույց տվե՛ք արևը ու լուսնը միասին.

սա դարձրե՛ք հաճելի «ավանդույթ»: Ամեն օր ու ամեն դասաժամի ստեղծե՛ք լռելու պահեր, վայելե՛ք լռելու բերկրանքը: Ինչ-պես Բ. Ֆրանկլինն է ասում. «Մովորեցրո՛ւ երեխաներիդ լռել, խոսել նրանք ինքներն էլ կսովորեն»:

Հաճախ ասա՛՛ աշակերտներիդ, որ նրանք կարող են: Բանաձևերի, լեզվաբերականական բոլոր իրողությունների մեջ ավելացրո՛ւ այն սերը, որը կրկնապատվելու է երեխայի հոգում ու հազարապատված փոխանցվելու է մեր մոլորակին: Հավատա՛՛, որ երեխան միակ ուժն է, որով կարելի է և պետք է ուղղորդել հասարակությանը՝ դեպի լավը, դեպի բարին, դեպի համամարդկայինը տանելու ակնկալիքով: Ուրեմն այսօր և հիմա երեխային փոխանցի՛ր բարու և համամարդկայինի բոլոր իդեալներն ու ասա՛՛ նրան, որ նա կարող է փոխել աշխարհը: «Մանկական աշխարհը վաղուց ի վեր բոլոր երկրային սրտահաճ բախտավորություններից ինձ համար ամենաբարձրն է եղել», - ասում է հայ մեծ լուսավորիչ, ուսուցիչ Խաչատուր Աբովյանը. «Մանուկներին կրթելն աշխարհիս երեսին ամեն բան է ինձ համար»:

Ուսուցի՛չ, քո՛նն է կյանքը ձևելու ողջ գործիքակազմը, քո՛նն է երեխային կրթելու առաքինի պատասխանատվությունը: Ուրեմն նրան ուսուցանի՛ր սերը, հավատը, կամքը՝ անելով ամեն ինչ, որ մանկության երկնակամարում արդեն դրվեն բոլոր այն ծիւրերը, որոնք հետո պիտի ծաղկեն ու գույնով լցնեն կյանքի պարտեզը:

Կարլեն ՆԱԶԱՐՅԱՆ
Բանասիրական ֆակուլտետ, 3-րդ կուրս

ԱՌՆՑ ՖԻԶԻԿԱՅԻ ՉԵՄ ՊԱՏԿԵՐԱՑՆՈՒՄ ԿՅԱՆՔՍ

Գերազանց առաջադիմությամբ օրեր առաջ ավարտեցի ՀՀ Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի ֆիզիկայի բաժինը և որոշել եմ անպայման շարունակել կրթությունս և՛ մագիստրատուրայում, և՛ ասպիրանտուրայում: Մինչ այդ պետք է զորակոչվեմ հայոց բանակ՝ հայրենիքիս պարտքս տալու:

Ուսումնառության այս չորս տարիների ընթացքում դասախոսներս մշտապես ինձ ներշնչել են, որ ես կարող եմ հասնել ավելի: Ես հավատացել եմ, և այդ հավատն օգնել է ինձ մշտապես ձգտել ավելի շատ գիտելիքներ կուտակել:

Ես մշտապես բարձր եմ գնահատել կրթության դերը մարդու կյանքում և հակված եմ եղել այն մտքին, որ 21-րդ դարի մարտահրավերների առանցքում գիտելիքի վրա հիմնված տնտեսության և հասարակության ձևավորումն է, որով և պայմանավորված է տվյալ պետության

ըստ իս, հանգեցնում է ոչ այնքան որակյալ մասնագետ դառնալուն:

Անդրադառնալով մասնագիտության ընտրությանը՝ հիմա կարող եմ վստահաբար ասել, որ ընտրությունս ճիշտ էր, անգամ չեմ կարող պատկերացնել իմ կյանքն առանց ֆիզիկայի:

Հավատացե՛ք, ֆիզիկան ամենուր է, ֆիզիկան շրջապատում է մեզ, մեր ամեն քայլը ֆիզիկայի հետ է կապված, ֆիզիկան կյանքի առարկա է: Ֆիզիկական երևույթներ տեղի են ունենում ամենուր՝ տիեզերքում, Երկրի ընդերքում, մթնոլորտում, կենդանի օրգանիզմներում: Մարդն ապրում է բնության մեջ և մասն է կազմում բնության: Դեռևս վաղ ժամանակներից մարդն ուսումնասիրել է իրեն շրջապատող աշխարհը և ձգտել է հասկանալ այնտեղ տեղի ունեցող երևույթները: Յուրաքանչյուր անհատ, ով ձգտում է հասկանալ աշխարհը կամ ցանկանում է այն վերափոխել, պետք է ծանոթ լինի ժամանակակից գիտության և տեխնիկայի հիմունքներին:

Համալսարանական տարիներն ինձ տվեցին առավելագույնը՝ մասնակցեցի բազմաթիվ սեմինար-կոնֆերանսների, ամեն շաբաթ բանավեճերի ակունքում քննարկումներ էինք անցկացնում, որը նպաստում էր գիտելիքների էլ ավելի զարգացմանը: 2018 թվականից եղել եմ ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահը, մասնակցել եմ բազմաթիվ ճամբարների: Չեմ կարող չխոսել նաև պրակտիկաների մասին. այն ինձ օգնեց ավելի կապվել մասնագիտությանս հետ, արժևորել ուսուցչի աշխատանքը: Սիրեցի երեխաների աշխարհը, նրանց հետ աշխատելը և համոզվեցի, որ ֆիզիկա առարկան հետաքրքիր և սիրելի դարձնելու համար աշակերտներին պետք է տալ հստակ և փաստացի տեղեկություններ: Եթե աշակերտները կատարեն որոշակի դիտումներ (սառցե կտորը արևի ճառագայթների տակ ինչպես է հալվում, դիտեն ծիածանը և քվարկեն նրա գույները և այլն), փորձեր (տեսնեն՝ ինչպիսի ջերմաստիճանում են եռում ջուրը, ձեթը, սպիրտը և այլն) կամ էլ կատարեն չափումներ(զանգված, ջերմաստիճան, ծավալ, արագություն...), նրանք իրենց կպատկերացնեն փորձի «ֆիզիկաների» կարգավիճակում: Սա այն առարկան է, որը լայնացնում է աշակերտների մտաճանապարհը:

Ամեն մոր օրվա շնորհիվ ցանկացած մարդ հնարավորություն է ստանում ինչ-որ բան անել, որևէ մոր և հետաքրքիր բան իմանալ կամ ինչ-որ բանի հասնել: Շատ կարևոր է բաց չթողնել կյանքի տված հնարավորությունները:

Սիրելի հայրենակիցներ, դիմորդներ, համաշխարհային համավարակի օրերին էլ ավելի մեծացավ ու արժևորվեց ուսուցչի և բժշկի դերը հասարակության կյանքում, մենք տեսանք, որ նրանք գրեթե հենասյուններն են մեր հասարակության, այնպես որ մասնագիտության ընտրության հարցում եղե՛ք առավել քան զգո՛ն, մեր պետությանը լավ մասնագետներ են պետք:

Խոսքս ուզում եմ ավարտել իմ կարգախոսով. «Առաջ անցիր նրանցից, ովքեր առջևում են, և մի՛ սպասիր նրանց, ովքեր հետևում են»:

Արտակ ՄԱՐԿՈՍՅԱՆ
Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի շրջանավարտ

ՄՊԱՍՈՒՄ ԵՄ ՄԵՊՏԵՄՔԵՐԻՆ



Ես էլ եմ Սուբիայանն եմ և օրեր առաջ ավարտել եմ հաշատուր Արվյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի տեխնոլոգիա և ձեռնարկչություն բաժնի չորրորդ կուրսը:

Դպրոցն ավարտելուց հետո, երբ որոշեցի ուսումնառությունս շարունակել բուհում, հստակ գիտեի, որ պետք է ընդունվեմ Մանկավարժական համալսարան, բայց ո՞ր բաժին, դեռ չէի կողմնորոշվել: Երբ եկա համալսարան, ծանոթացա բաժիններին, հասկացա, որ տեխնոլոգիական կրթության ամբիոնն ինձ համար է, որ կրթությունս ստանալուց հետո ինձ համար կբացվեն բազում կողպված դռներ:

Ընդունվեցի համալսարան: Առաջին անգամ, երբ որպես ուսանող ոտք դրեցի համալսարան, միանգամից արժանացա ջերմ ընդունելության ամբիոնի դասախոսների կողմից, և առաջին տպավորությունը, որ ես ստացա, ինձ ուղեկցեց հետագա բոլոր տարիների ընթացքում:

Ուսանողական տարիների սկզբից հասկացա, որ այն ճանապարհը, որն ընտրել եմ, հեշտ չի լինելու, քանի որ ամենևին էլ դյուրին չէ մանկավարժ դառնալը և մանկավարժի պատվավոր կոչումը կրելը:

Ժամանակի հետ հասկացա, որ բացի մասնագիտական գիտելիքներ ձեռք բերելուց պետք է մի շարք անձնային որակներ վերանայեմ, շտկեմ բնավորության շատ գծեր: Սկզբում ինքնամոխի, դյուրագրգիռ, բռնկուն և անհամբեր էի. սակայն հասկացա, որ լավ ուսուցիչ լինելու համար պետք է լինել համբերատար ու հանդուրժող:

Մանկավարժական համալսարանն ինձ ընծեռել է շատ հնարավորություններ: Մասնակցել եմ մի շարք գիտաժողովների, ինչպես նաև միջբուհական տարբեր միջոցառումների: Սովորելով տեխնոլոգիայի և ձեռնարկչության բաժնում՝ հնարավորություն ունեցա մասնագիտական պրակտիկաներ անցնել ֆինանսաբանկային և արտադրական (գործարանային արտադրություն) կազմակերպություններում: Պրակտիկաներն անցնելով վերոնշյալ ոլորտներում՝ ձեռք բերեցի մնայուն գիտելիքներ նաև այդ բնագավառների վերաբերյալ:


Մանկավարժական պրակտիկաներ ունենալու արդյունքում ես վերցնակամապես համոզվեցի, որ իմ առաքելությունն է՝ դառնալ ուսուցիչ:

Համալսարանում ինձ համար բացահայտեցի մի նոր գիտություն՝ ռոբոտաշինություն: Իրականում նախքան համալսարան ընդունվելու գաղափար չունեի այս գիտության մասին, և ինձ համար այս ամենն ուղղակի անհասանելի էր: Տեսնել և սեփական ձեռքերով պատրաստել ռոբոտացված իրեր՝ ես միայն կարող էի երագել: Ակամայից այդ երագանքս էլ դարձավ իրականություն:

Քանի որ մասնագիտության ընտրությունը կատարել եմ երկար փնտրողների արդյունքում, չորրորդ կուրսում որպես ավարտական աշխատանքի թեմա ընտրել եմ «Մասնագիտական կողմնորոշումը»: Լիախոյս եմ, որ ուսուցչական աշխատանքի անցնելուց հետո կկարողանամ իմ աշակերտներին օգնել մասնագիտության կողմնորոշման հարցում ճիշտ ընտրություն կատարել: Չէ՞ որ այս ընտրությունից է կախված մարդու ապագա գործունեությունը:

Արդեն շրջանավարտ եմ և որպես մանկավարժ վստահորեն կարող եմ ասել. «Ես ճիշտ ընտրություն եմ կատարել, ես սիրում եմ իմ մասնագիտությունը և ձգտում եմ կատարելագործվել, ավելացնել գիտելիքներս: Ահա ինչու անհամբերությամբ սպասում եմ սեպտեմբերին՝ որպես մագիստրատուրայի ուսանող վերադառնալու իմ հարազատ ու անվտանգության կրթօջախ»:

Էլեն ՍԱՎԵԼՅԱՆ
Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի շրջանավարտ



տեղն ու նշանակությունը համաշխարհային արագընթաց զարգացումներում: Այսօր արդեն անվիճելի փաստ է, որ տաղանդը և գիտելիքն են բազմաթիվ երկրներում հասարակության բարեկեցության աճի հիմնական գրավակները: Բնական ռեսուրսներով սակավ օժտված այնպիսի երկրի համար, ինչպիսին Հայաստանն է, տնտեսության զարգացման կարևորագույն ռեսուրսը լավագույն գիտելիքների տիրապետող և ստեղծագործ մարդկային կապիտալն է, իսկ դրան հասնելու միակ ուղին միջազգայնորեն մրցունակ կրթական համակարգի ստեղծումն է, որին և միտված են ոլորտում իրականացվող լայնածավալ բարեփոխումները:

Մեր օրերում դիմորդի համար բավականին դժվար է և պատասխանատու մասնագիտության ընտրությունը, որովհետև ուսանողներն իրենց մասնագիտության ընտրության հարցում հիմնականում առաջնորդվում են այն հանգամանքով, թե որ առարկաներից դպրոցում ունեն բարձր առաջադիմություն և ընտրում են այնպիսի մասնագիտություններ, որոնց ընդունելության քննությունները համապատասխանում են այդ առարկաներին: Քիչ չի պատահում նաև, երբ ուսանողը հայտնվում է մի բաժնում, որը ոչ միայն իր ունակությունների և գիտելիքի շրջանակներում չէ, այլև իրենք չէ, ինչն էլ,

Նոր մենագրություն Ֆրիտյոֆ Նանսենի մասին




Ֆրիտյոֆ Նանսենի թանգարանը թարգմանել և հրատարակել է ՄԱԿ-ի աշխատակցուհի Մարիտ Ֆոսսեի «Ֆրիտյոֆ Նանսեն» Մեծ Մարդասերը» գիրքը (թարգմանիչ՝ Վարդանուշ Սարգսյան, խմբագիր՝ Հայարփի Խաչատրյան), որտեղ հեղինակը առանձին գլուխներով ներկայացրել է Նանսեն-հետազոտողին, Նանսեն-դիվանագետին, Նանսեն-փախստականների գծով գերազույց հանձնակատարին և Նանսենի ժառանգությունը: Կատարելով պարտականությունները,

որոնք վերաբերում էին ռազմագերիներին, ռուս փախստականներին, սովաճառ եղողներին օգնություն ցուցաբերելուն, 1920-ական թվականներին Նանսենն իր գործունեությունը նվիրեց Մերձավոր Արևելքում ու Կովկասը ցնցած քաղաքական ճգնաժամերի լուծմանը:

Մեզ համար առանձնակի կարևոր և հոգեցունց է հայ ժողովրդի ճակատագրին նվիրված գլուխը, որտեղ հեղինակը հանգամանակից անդրադարձ է կատարել Սևրի հաշտության պայմանագրի դրույթներին, Հայերի վերաբնակեցման հարցին, Նանսենը և հայ ժողովուրդը կապին, 20-րդ դարասկզբի Հայոց ցեղասպանությանը, ինչպես նաև Նանսենյան անձնագրին, որի շնորհիվ 320.000 հայեր փրկվեցին ու աշխարհի 54 երկրներում ապրելու և աշխատելու իրավունք ստացան:

Գրքի առաջաբանի հեղինակ ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղար Անտոնիո Գուտերիշը իրավացիորեն նշել է, որ հեղինակը պատմում է, թե ինչպես է Նանսենը կատարել դիվանագետի իր աշխատանքը, թե քանի կյանք ու ճակատագիր է նա փրկել, թե ինչպես է իր հեղինակությունը, ազնվությամբ, անկեղծությամբ նվաճել պետությունների ղեկավարների վստահությունը՝ ոչ թե փառքի համար, որն ուներ միանգամայն բավարար չափով, այլ դժբախտության մեջ հայտնված մարդկանց անշահախնդիր և անձնագրի օգնության համար:

Հայարփի ԽԱՉԱՏՐՅԱՆ
«Ֆրիտյոֆ Նանսեն» իմնադրամի գործադիր տնօրեն, Խ. Արվյանի անվ. ՀՀ ՄԳ բանասիրական ֆակուլտետի 2006 թ. շրջանավարտ



ՄԱՐԻՏ ՖՈՍՍԵ
ՖՐԻՏՅՈՖ ՆԱՆՏԵՆԻ ՄԵԾ ՄԱՐԴԱՍԵՐԸ



Թերթերով անցյալի էջերը



Հայ կոմպոզիտոր, ջութակահար, պրոֆեսոր, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՀԳՄՀ դասախոս Սերգեյ Աղաջանյանը իր կողմից ղեկավարած խմբի հետ Ջվարթնոցում, համերգի ժամանակ

Սերգեյ Աղաջանյան

Կոմպոզիտոր, ջութակահար, պրոֆեսոր, Հայաստանի արվեստի վաստակավոր գործիչ, դասական երաժշտության վառ ներկայացուցիչ Սերգեյ Աղաջանյանը ծնվել է Պեխկոնում 1929 թվականի սեպտեմբերի 1-ին, արհեստավոր Համբարձում Աղաջանյանի ընտանիքում: 1937 թվականին ընտանիքը տեղափոխվել է Թեհրան, որտեղ էլ Սերգեյ Աղաջանյանը տեղի «Քյուլշեշ-Դավթյան» հայկական դպրոցում ստացել է նախնական կրթությունը: Հայտնի երաժիշտ Աշոտ Պատմազյանի առաջարկով 1949 թվականին Սերգեյ Աղաջանյանը ընդունվել է ավարտել է Թեհրանի պետական կոնսերվատորիան՝ Սերգեյ Խուցինի ջութակի դասարանը: 1953-ին նա տեղափոխվել է իր հայրենիք՝ Հայաստան: Երևանում նա ընդունվել է ավարտել է Կոմիտասի անվան կոնսերվատորիան՝ նախ պրոֆեսոր Շամշյանի ջութակի դասարանը (1952 թ.) այնուհետև պրոֆեսոր Է. Միրզոյանի կոմպոզիցիայի դասարանը (1975 թ.): 1975 թվականին Ս. Աղաջանյանը դարձել է կոմպոզիտորների միության անդամ:

Լինելով տաղանդավոր կոմպոզիտոր, նա իրեն նվիրել է ոչ միայն ստեղծագործական, այլև մանկավարժական և հասարակական գործունեությանը:

1964 թ.-ին կոմպոզիտորը հրավիրվել է Պոլիտեխնիկ ինստիտուտ՝

ղեկավարելու կամերային նվագախումբը: Այդ նվագախումբը եղել է իր տեսակի մեջ առաջինը և միակը: Սերգեյ Աղաջանյանի ղեկավարությամբ նվագախումբը 30 տարվա ընթացքում արժանացել է 5 ոսկե մեդալի և բազմաթիվ պատվավոր մրցանակների:

1983 թվականին ստացել է դոցենտի, իսկ 1987-ին՝ պրոֆեսորի կոչում: 1985 թվականից Ս. Աղաջանյանը Հայաստանի վաստակավոր գործիչ է, կոչում, որը նրա վաստակի արժանի գնահատումն է: Ս. Աղաջանյանի թավջութակի համար գրված «Մեմախոսություն» սոնատ-ֆանտազիան 1999 թվականին Սանկտ Պետերբուրգում արժանացել է Պրոկոֆևի անվան 3-րդ միջազգային մրցույթի 1-ին մրցանակի:

2004-2005 թթ. ղեկավարել է Մանկավարժական համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետի երաժշտության ամբիոնը:

Աղաջանյանի ստեղծագործությունները բազմաժանր են. վոկալ գործեր, գործեր կամերային նվագախմբի համար, կամերային նվագախմբի պոլիմոնոդիաներ, բազմաթիվ խմբերգային գործեր, սոնատներ ջութակի, թավջութակի, դաշնամուրի համար, խմբերգային կամուստա սինֆոնիկ նվագախմբի համար և այլն:

ՀԳՄՀ գիտական բանգարան

ՃԱՆԱԴԱՐՆԵՐԸ ՇԱՏ ԵՆ, ԲԱՅՑ ՄԵՆՔ ԸՆՏՐՈՒՄ ԵՆՔ ՄԵՐԸ

Ամեն անգամ, տարբեր առիթներով, հեքիաթի հերոսի նման մեր հերթն էլ է գալիս անհրաժեշտ որոշման՝ տարբեր ճանապարհների մոտ կանգնելու ու մի պահ խորհելու՝ դրանցից մեկն ընտրելուց առաջ: Այստեղ է, որ հեքիաթի «էս ճամփով գնաս, էսպես կլինի, էն ճամփով գնաս, էնպես կլինիները» փոխարինվում են ներքին մտքերով, ու սկսում են ամբառ խոսել ինքդ քեզ հետ, մինչև գտնված մի հին երազանքի պես բռնում են սրտիդ ձեռքը՝ վստահ լինելով, որ այդպիսով դու բռնում ես ներկադ ու շարժվում առաջ՝ թեթև ու անուր քայլերով:

Ուզում եմ ասել, որ հայ հին և միջնադարյան գրականության մասնագիտության ընտրությունը գրականությունը սիրողիս համար պարզապես կամային ու պատասխանատու հերթական իրադարձություն չէր: Գրականության

հենց այդ շրջանակի մեջ նեղ մասնագիտանալու փորձը չէր կարող միայն ընտրություն լինել, դա պիտի լիներ սրտի ընտրություն... Ու ես գործնական ժամանակ եմ ունեցել գիտակցելու համար, որ սիրում եմ այս էական շրջանը՝ այն խորությամբ հետազոտել փորձելու չափ: Գիտելիքի նոր որակներ բերել, նոր համոզմունքներ մշակել, գրականության մեջ զգալ ժամանակի ընթացքը, քեզ տեսնել այդ ընթացքի սահմաններին ու բռնել պահը... Հետո զգալ այդ պահի՝ ափիդ մեջ չտեղավորվելու համառությունը... Հարուստ, յուրօրինակ հարուստ են դառնում, երբ հասկանում են, որ իրականում սահմաններ չկան, դրանք մեր մտքում են, իսկ մեզ ու գրականությանը կապում է սովորական մարդկային միտքը: Թերթում ես, թերթում հին գրականության էջերը, ուսումնասիրում ես սիրո, կյանքի,

»8

ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՊՍԱԿ

Արմեն Խաչատրյան

63 տարեկանում կյանքից հեռացել է Մանկավարժական համալսարանի շրջանավարտ, ՀՀ ԱԺ նախկին նախագահ Արմեն Խաչատրյանը:

Արմեն Խաչատրյանը ծնվել է Երևանում, 1957 թվականին, 1978-ին ավարտել Մանկավարժական համալսարանի Բանասիրության ֆակուլտետը:

1999 թվականին նա եղել է Ազգային ժողովի պատգամավոր, ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ, 1999-2003 թվականներին՝ Ազգային ժողովի նախագահ, ՀՀ անվտանգության խորհրդի անդամ, ԱՊՀ մասնակից պետությունների միջխորհրդարանական վեհաժողովի խորհրդի անդամ:

2003-2010 թվականներին եղել է Ուկրաինայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպանը, 2004-2016 թվականներին՝ Մոլդովայի Հանրապետությունում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպանը (նստավայրը՝ Կիև), 2010-2017 թվականներին՝ Բելառուսի Հանրապետությունում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպանը, ԱՊՀ կանոնադրական և այլ մարմիններում՝ ՀՀ մշտական լիազոր ներկայացուցիչը:

Մանկավարժական համալսարանն իր խորը վշտակցությունն է հայտնում Արմեն Խաչատրյանի՝ պետական գործչի և բուհի անվանի շրջանավարտի հարազատներին, մտերիներին ու գործընկերներին:



ՍՈՒՐԵՆ ԹՇՏՈՒՆԻ



Կյանքից հեռացել է ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, Մանկավարժական համալսարանի ռեժիսուրայի ամբիոնի երկարամյա դասախոս, ռեժիսոր Սուրեն Ռշտունին:

Սուրեն Ռշտունին երկար տարիներ որպես ռեժիսոր աշխատել է հեռուստառադիոյի կոմիտեում, Ազգային ռադիոհեռուստատեսությունում, իսկ 2011 թվականից

դասավանդում էր Մանկավարժական համալսարանի ռեժիսուրայի ամբիոնում:

Նա եղել է հեռուստառադիոյի կողմից սիրված մի շարք հաղորդումների, շոուն-ծրագրերի ղեկավար ռեժիսոր, ինչպես նաև մասսայական միջոցառումների հեղինակ-ռեժիսոր: Մասնագիտական պարբերականներում, զրբերում և թերթերում տպագրվել են հեռուստատեսային ռեժիսուրայի վերաբերյալ նրա հեղինակած մի շարք հոդվածներ:

Մանկավարժական համալսարանը, ռեժիսուրայի, հեռուստալրագրության ամբիոնները խորապես ցավակցում են ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Սուրեն Ռշտունու ընտանիքին, հարազատներին և գործընկերներին:

Մեծաշնորհ ռեժիսորի և մանկավարժի հիշատակը վառ կմնա իր իր գործընկերների և ուսանողների սրտերում:

Վազգեն Մարգարյան

Կյանքից անժամանակ հեռացել է Մանկավարժական համալսարանի Հոգեբանության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, հոգեբանական գիտությունների դոկտոր, դոցենտ Վազգեն Մարգարյանը:

Կրթությունն ստացել է Խարկովի պետական ավտոճանապարհային տեխնիկական, ապա Երևանի պետական համալսարանում: Մանկավարժական գործունեությամբ զբաղվել է 1999 թվականից՝ դասավանդելով ինչպես Մանկավարժական համալսարանում, այնպես էլ մեր երկրի տարբեր բուհերում:

2017 թվականից ղեկավարում էր Մանկավարժական համալսարանի Հոգեբանության ամբիոնը, դասախոսություններ կարդում գիմնորական հոգեբանության, գործունեության և գիմնորական կոլեկտիվի հոգեբանության, պատերազմական իրավիճակում քարոզչության առանձնահատկությունների վերաբերյալ:

Վազգեն Մարգարյանը ոչ միայն մի շարք գիտական հրատարակումների, աշխատությունների, այլև ՀՀ Կառավարության առընթեր արտոնագրային վարչությունում արտոնագրած գյուտերի հեղինակ է:

Մանկավարժական համալսարանն իր խորը վշտակցությունն է հայտնում հոգեբանի, գիտնականի ու սիրված մանկավարժի հարազատներին, մտերիներին, գործընկերներին և ուսանողներին:



ՃԱՆԱԴԱՐՆԵՐԸ ՇԱՏ ԵՆ, ԲԱՅՑ ՄԵՆՔ ԸՆՏՐՈՒՄ ԵՆՔ ՄԵՐԸ

➤ Կնոջ, բնության անվերջաճանալի դիտարկումներն ու զարմանում են... Հին շրջանի ստեղծագործողները դարեր առաջ իրենց ժամանակի մեջ մե՞ր օրերի ժամանակն են ստեղծել՝ այդքա՞ն առաջ են անցել ապրածից, նո՞ր տեսողություն են ունեցել, թե՞ նորերն ունեն հին տեսողություն, թե՞ հինն ու նորը ուղղակի սահմաններ են դնում, որոնք իրականում խանգարում են հասկանալ դրանք կարգավորող կողմը՝ գրականությունը, և այնուամենայնիվ, զգայաչափը երկու կողմ ունի՝ մարդը և գրականությունը: Մի բան պարզ է. գրականության շուրջ օբյեկտիվ հարցադրումների ու վերլուծությունների համար պիտի լավ իմանալ այդ բանալի շրջանը՝ հին շրջանը: Եվ այս նախերգանքային պատկերացումներն ու մտածողությունն ինձ դարձրին հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասպիրանտ: Կարճ ժամանակ անց հասկացա, որ գիտությունն ավելին է, քան իմ պատկերացումներն ու որոշակի փորձը, մանավանդ որ թեկնածուական ատենախոսություն են գրում «Գրիգոր Մագիստրոսի ստեղծագործությունները Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերում» թեմայով... Հասկացա, որ վերևում ասածս զգայաչափը միակը չէ, ու դու երբեմն պիտի փոփոխես, իսկ ավելի հաճախ նոր զգայաչափեր բերես. սա է փոփոխվող իրականության պահանջը, որը միշտ վերակառուցելու խնդիր է դնում:

Իհարկե, ոչինչ պատահական չի լինում, այդ թվում նախասիրությունը ճանաչելու ճանապարհը: Իմ ճանապարհը շատ զգայուն է, նուրբ, նախանձելի, գիտելիքով, սիրով ու հրաշքներով լի... Երջանիկ լինել այնքա՞ն, որ աշակերտել այս իմաստուն կնոջը... գրականության մեծակշիռ ուսուցիչս՝ Աելիտա Դոլուխանյանը, նրա մասին են այս խոսքերը... Չեմ կարող մալ չհիշել սիրով լի աչքերով լսարան մտնող ու գրականության մասին խոսելիս վարակող բազմազուն խանդավառությամբ Լիլիթ Հովսեփյանին: Նրանք խորհրդանիշներ են ինձ համար ու իմ ընտրության ճանապարհին:

Ճանապարհները սովորաբար շատ են, բայց մենք ընտրելու ենք մեկն ու մերը... Մենք առանց ընտրությունների մենք չենք, մեր էության մի մասնիկով մենք հենց մեր ընտրություններն ենք, որովհետև մեր էությունը սնվել ու սնվելու է դրանց արդյունքներով, ընտրենք մեր սրտին ու մեր իրականությանը մոտ տարբերակներ, որ դժվարությունները հաղթահարելու ցանկություն ունենանք:

Հասմիկ ՀՈՎՍԵՓՅԱՆ

2020-2021 ուսումնական տարվա մագիստրատուրայի ընդունելություն

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը հայտարարում է 2020-2021 ուսումնական տարվա ուսուցմամբ մագիստրատուրայի ընդունելություն (տեղեր, վարձաչափեր)

1. Առաջին փուլով.
 - ա) մագիստրատուրայի ընդունելությունն ըստ մասնագիտությունների իրականացվում է ՀՀ կառավարության կողմից հաստատված պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերի,
 - բ) ընդունելությանը կարող են մասնակցել ՀՀ քաղաքացիները կրթական աստիճան ունեցող տվյալ տարվա շրջանավարտները, ովքեր ավարտական աշխատանքի պաշտպանությունից և ամփոփիչ ատեստավորման քննությունից ստացել են բարձր միավորներ,
 - գ) մագիստրատուրայի ընդունելության փաստաթղթերն ընդունվելու են առցանց՝ www.dimord.aspu.am կայքի միջոցով, 2020թ. հունիսի 15-ից մինչև հուլիսի 3-ը, մրցույթի արդյունքները կամփոփվեն հուլիսի 6-ին,
 - դ) մագիստրատուրայի անվճար (պարտադիր զինվորական ծառայությունից զորացրված (ԲԶ) դիմորդների համար նախատեսված տեղերի շրջանակներում) համակարգի մրցույթին կարող են մասնակցել ՀՀ քաղաքացիները, որոնք մասնագիտությամբ բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճան ունեցող, ՀՀ զինված ուժերում պարտադիր զինվորական ծառայությունից զորացրված (վերջին երեք տարվա ընթացքում) դիմորդները,
 - ե) մագիստրատուրայի անվճար (պարտադիր զինվորական ծառայությունից զորացրված (ԲԶ) դիմորդների համար նախատեսված տեղերի շրջանակներում) համակարգի ընդունելությունը կատարվում է առանց քննության, մրցույթային կարգով՝ նախորդ ուսումնառության դիպլոմի հավելվածում գրանցված առարկաների ՄՈԳ-ի հիման վրա,
 - զ) մագիստրատուրայի անվճար (պարտադիր զինվորական ծառայությունից զորացրված (ԲԶ) դիմորդների մագիստրատուրայի փաստաթղթերի ընդունելությունն իրականացվելու է առցանց՝ www.dimord.aspu.am կայքի միջոցով, 2020թ. հուլիսի 6-ից մինչև օգոստոսի 26-ը, մրցույթի արդյունքները կամփոփվեն օգոստոսի 27-ին,
 - է) անվճար համակարգի մրցույթից դուրս մնացած պարտադիր զինվորական ծառայությունից զորացրված դիմորդները վճարովի համակարգ են ընդունվում առանց ընդունելության քննության:
- 2) ընդունելությունը կատարվում է մրցութային կարգով՝ մանդատային հանձնաժողովի երաշխավորության հիման վրա: Մրցույթն անցկացվում է հետևյալ չափանիշների առաջնահերթությամբ.
 - ճ) մագիստրատուրայի ուսումնառության ծրագրում ցուցաբերած ընդհանուր առաջադիմության գումարային միջին գնահատականով կամ միջին որակական գնահատականով (ՄՈԳ),
 - և մասնագիտական առարկաներից ցուցաբերած առաջադիմության միջին գնահատականով կամ միջին որակական գնահատականով,
 - և տպագրված կամ տպագրման ընդունված գիտական աշխատությունների, թեզիսների և զեկուցումների առկայությունը,

2. Երկրորդ փուլով.
 - ա) մագիստրատուրայի ընդունելությունն իրականացվում է ըստ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հաստատված ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման (վճարովի) տեղերի,
 - բ) ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման (վճարովի) տեղերի մրցույթին կարող են մասնակցել ՀՀ քաղաքացիները, ինչպես նաև ՀՀ պետական և ըստ մասնագիտությունների հավատարմագրված (ինստիտուցիոնալ հավատարմագրում անցած) ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճան ունեցող դիմորդները,
 - գ) փաստաթղթերի ընդունելությունն իրականացվելու է առցանց՝ www.dimord.aspu.am կայքի միջոցով, 2020թ. հուլիսի 6-ից մինչև օգոստոսի 24-ը, հարցազրույցը անցկացվելու է ա/թ. օգոստոսի 26-28-ը,
 3. Երրորդ փուլով.
 - ա) հեռակա ուսուցման համակարգում ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման (վճարովի) տեղերի մագիստրատուրայի մրցույթին կարող են մասնակցել ՀՀ քաղաքացիները, ինչպես նաև ՀՀ պետական և ըստ մասնագիտությունների հավատարմագրված (ինստիտուցիոնալ հավատարմագրում անցած) ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճան ունեցող դիմորդները,
 - բ) հեռակա ուսուցման համակարգում մագիստրատուրայի փաստաթղթերի ընդունելությունն իրականացվելու է առցանց՝ www.dimord.aspu.am կայքի միջոցով, 2020 թ. հուլիսի 6-ից մինչև օգոստոսի 25-ը, հարցազրույցը կանցկացվի 2020 թ. օգոստոսի 27-31-ը:
4. Մասնագիտության փոփոխման պարագայում, ՀՀ քաղաքացիները կարող են շրջանավարտների ընդունելությունը իրականացվում է միայն վճարովի համակարգում:
5. Սանկավարժի որակավորում չունեցող դիմորդների հետ անցկացվում է նաև հարցազրույց «Մանկավարժություն» և «Հոգեբանություն» առարկաներից:
6. Օտարերկրյա քաղաքացիները և ՀՀ քաղաքացիություն չունեցող անձինք մագիստրատուրա կարող են ընդունվել միջպետական և միջգերատեսչական պայմանագրերի կամ համաձայնագրերի հիման վրա, լրացուցիչ տեղերի հաշվին, ինչպես նաև վճարովի հիմունքներով սեփական նախաձեռնությամբ:
7. Մագիստրատուրայի վճարովի համակարգ ընդունված դիմորդների հրամանագրումը կատարվում է մինչև ա/թ. սեպտեմբերի 10-ը ուսման վարձի առնվազն ամսական չափաբաժինը վճարելուց հետո:

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է

2020-2021 ուսումնական տարվա ասպիրանտուրայի ընդունելություն (առկա ուսուցում)

1. Մանկավարժության տեսություն և պատմություն - ԺԳ.00.01, 1 տեղ
 2. Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա (քիմիա, մաթեմատիկա) - ԺԳ.00.02, 2 տեղ
- Դիմորդները ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը.
1. Ասպիրանտուրա ընդունվելու համար տրվում է դիմում հաստատության ղեկավարի անունով՝ կցելով հետևյալ փաստաթղթերը՝
 - 1) բակալավրի և մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի կամ օրդինատորի դիպլոմի ու դրանց հավելվածների պատճենները (օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին),
 - 2) ընտրված մասնագիտությամբ հրատարակված առնվազն մեկ գիտական աշխատանքի պատճենը կամ գիտական ռեֆերատ՝ առնվազն 20 տպագրական էջի սահմաններում.
 - 3) անձնագրի պատճեն
 - 4) ինքնակենսագրություն և երեք լուսանկար (3 x 4 չափսի).
 - 5) քաղվածք աշխատանքային գրքուկից (առկայության դեպքում): Փաստաթղթերն ընդունվում են հայտարարության հրապարակման օրից մինչև ա/թ հունիսի 24-ը (ներառյալ):

Ընդունելության մասնագիտական քննությունները կազմակերպվում են ա/թ հունիսի 25-ից 30-ը (ներառյալ):

Տեղեկությունների համար դիմել հետևյալ հասցեով՝ Երևան, Տիգրան Մեծի 17, 3-րդ հարկ, Գիտահետազոտական կենտրոն, հեռ.՝ 59-70-29:

Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՉԵՆԱԿԵՏԱԾԻՆ ՎԱՐՋԱՐԱՆԸ (ԱՎԱԳ ԴՊՐՈՑ)

ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է 2020-2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Հասցե՝ Բ. Երևան, Տիգրան Մեծ 17, հեռ. (010) 59-22-72
Խ. Աբովյանի տեղանքը ՀՊՄՀ

<p>Գրանցման վկայական՝ 01U00184 տրված է 26.03.2008 թ. Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97: Էլ. փոստ՝ Newspaper@aspu.am, asryansilva@gmail.com Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպագրատանը: Հասցեն՝ Արշակունյաց 2 Տպաքանակը՝ 1800 օրինակ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ</p>	<p>Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է: Հղումը պարտադիր է: Թերթը տարածվում է անվճար: Հանձնված է տպագրության 24.06. 2020 թ. Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am</p>	<p>Գլխավոր խմբագիր՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ Բանասիրական գիտությունների թեկնածու Էջարունը՝ Պետրոս ՎԱՐԿԱՆՅԱՆԻ Համարի պատասխանատու՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ</p>
--	---	--